# ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓՈՂՈՑ Հ.6/3 ՀՈՂԱՄԱՍ ԵՎ Հ.8 ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ 12» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԵՎ ԱՎՏՈՀԱՆԳՐՎԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ



## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարող

«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն Մ. Թևոսյան

**Երևան, 2025թ.**

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| ՇԿ | Շինարարության կապալառու |
| ԲԲԿ | Բազմաբնակարան բնակելի շենք |
| ԲՀՏ | Բնապահպանության և հանքարդյունաբերության տեսչություն |
| ՇՄՍԱԳ | Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում |
| ԲՍԿՊ | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան |
| ԱԱՇՄ | Առողջություն, անվտանգություն, շրջակա միջավայր |
| ԻԳ | Իրականացնող գործակալություն |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմին |
| ՇՄՆ | Շրջակա միջավայրի նախարարություն |
| ՍԿ | Սպասարկման (շահագործման) կապալառու |
| ԾԱԱ | Ծրագրի ազդակիր անձինք |
| ՖՄՌ | Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ |
| ԱՊՄ | Անհատական պաշտպանության միջոցներ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....6

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.....6

3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ .....7

**3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը** .....7

**3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին** .....13

**3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը** .....16

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....19

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....25

**5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը**.....26

**5.2. Սեյսմիկա և երկրաբանություն** .....27

**5.3. Հիդրոերկրաբանություն** .....30

**5.4. Կլիմա և օդային ավազան** .....31

**5.5. Մթնոլորտային օդ**.....33

**5.6. Աղմուկ և թրթռում** .....35

**5.7. Ջրային ռեսուրսներ**.....36

**5.8. Հողային ռեսուրսներ** .....37

**5.10. Բուսական և կենդանական աշխարհ**.....38

*5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ* .....38

**5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ** .....39

**5.12. Պատմամշակութային հուշարձաններ**.....39

**5.13. Բնության հուշարձաններ** .....40

**5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ**.....40

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....43

**6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը** .....44

**6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ**.....48

7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....65

**7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ**.....65

**7.2. Ծրագրի առավելությունները** .....65

8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ .....66

8.1. Ջուր.......66
8.2. Հողային աշխատանքներ.......67
8.3. Օգտագործվող նյութեր.......68
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.......68
9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները.......68
9.1.1. Օդային ավազան.......68
9.1.2. Ջրային ավազան.......73
9.1.3. Թափոնների կառավարում.......73
9.1.4. Հողային ռեսուրսներ.......74
9.1.5. Կենսաբազմազանություն.......74
9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ.......74
9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ.......75
9.1.8. Արտակարգ իրավիճակներ.......75
9.1.9. Աղմուկ և թրթռում.......75
9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում.......76
9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն.......77
9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ.......78
9.1.13. Սանիտարահիգենիկ և սանիտարահամաճարակային նորմեր.......78
9.1.14. Բարեկարգում և կանաչապատում.......79
9.2. Սոցիալական ծրագիր.......79
10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.......80
11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.......81
ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.......82
ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ.......97
ՀԱՎԵԼՎԱԾ 3՝ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.......101
ՀԱՎԵԼՎԱԾ 4՝ ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ N 439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ.......103
ՀԱՎԵԼՎԱԾ 5՝ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 105

ՀԱՎԵԼՎԱԾ 6՝ «ՀԷՑ» ՓԲԸ-Ի, «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-Ի ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ..... 108

. 120

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Ձեռնարկող | «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ 12» ՍՊԸ |
| Ձեռնարկողի իրավաբանական հասցեն | ՀՀ, Երևան, Արաբկիր, Մալխասյանց փ. /6/1 15, 0051 |
| Էլեկտրոնային հասցե | arabkir.ojsc@mail.ru<br>info.consecoard.am |
| Նախատեսվող գործունեության անվանումը | ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մախաասյանց փողոց h.6/3 հողամաս և h.8 շինություն հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցում (քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 15000 քմ և ավելի ընդհանուր կառուցապատման մակերեսով, ներառյալ բոլոր հարկերի, այդ թվում՝ ստորգետնյա հարկերի մակերեսները, բարեկարգման անջրանցիկ տարածքի մակերեսները («Բ» կատեգորիա», Կետ 8, քաղաքաշինության բնագավառ, ենթակետ՝ բ)) |
| Նախատեսվող գործունեության նպատակը | Բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցում |
| Նախատեսվող գործունեության իրականացման վայրը | ՀՀ, քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Մալխասյանց փողոց h.6/3 հողամաս և h.8 շինություն |
| ՇՄԱԳ հաշվետվության մշակող | «Քոնսեկոարդ» ՍՊԸ |
| Պետական ռեգիստրի գրանցման համարը | 264.110.1281186 |
| Գրանցման տարեթիվը | 12.07.2022 |

## 2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքը և ավտոհանգրվանային մասնաշենքը կառուցվելու են սեփականության իրավունքով «Մալխասյանց 12» ՍՊԸ-

ին պատկանող հողամասերում, որոնք գտնվում են ՀՀ, Երևան քաղաք, Արաբկիր վարչական շրջան, Մախսայանց փողոց h.6/3 հողամաս և h.8 շինություն հասցեներում: Տարածքի ընդհանուր մակերսը կազմում է 0.3772 հա (սեփականության վկայականները ներկայացված են Հավելված 2-ում): Շինության տեղադիրքը ընտրվել և նախագծվել է հաշվի առնելով արդեն իսկ գոյություն ունեցող և հարևանությամբ կառուցվող շենք-շինությունները՝ ապահովելով ներդաշնակ ինտեգրում միջավայրի հետ: Նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք՝ ստորգետնյա և վերգետնյա հարկերով, ինչպես նաև առանձին վերգետնյա ավտոհանգրվանային մասնաշենք: Շենքերը նախագծվել են ժամանակակից քաղաքաշինական պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով բնակիչների հարմարավետության և անվտանգային չափանիշները: Մանրամասները ներկայացված են սույն հաշվետվության 6-րդ բաժնում (նախատեսվող գործունեության բնութագիրը) և աշխատանքային նախագծում:

Ներկայումս նշված տարածքում առկա են շենք-շինություններ և հողատարածքներ, որոնք մասնակիորեն ենթակա են կապամոնտաժման և վերակազմակերպման: Տարածքը գտնվում է Երևանի Արաբկիր վարչական շրջանի Մախսայանց փողոցում՝ h.6/3 հողամասի և h.8 շինության հասցեներում, կենտրոնական բնակելի թաղամասում, որտեղ հարևանությամբ առկա են բազմաբնակարան շենքեր և հասարակական նշանակության օբյեկտներ: Գործունեության իրականացման ընթացքում հարակից բնակելի շենքերի և տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով մշակվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ, որոնք ներկայացված են սույն հաշվետվության Հավելված 1-ում (ԲԿՊ):

## 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Սույն գլուխը ներկայացնում է նախատեսվող գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

### 3.1. ՀՀ ազգային օրենսդրությունը

*Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն*

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ

օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պաշտպանության մասին համապատասխան ազգային օրենքը հետևյալն է.

✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենք (հունիսի 21, 2014)։ Սույն հաշվետվությունը մշակվել է համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (մայիսի 3, 2023) օրենքի դրույթների և պահանջների:

Կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական ոլորտը կարգավորող հետևյալ իրավական ակտերը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (1991, թարմացված 2006-ին),
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք» (1994 թ.,, վերջին փոփոխությունը՝ 2022թ.),
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998),
- «ՀՀ Հողային օրենսգիրք» (2001),
- «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2001),
- «Բնապահպանական կրթության մասին» ՀՀ օրենք (2001),
- «Ընդերքի մասին օրենսգիրքը» (2002),
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002),
- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2002),
- «Ջրօգտագործողների միությունների և ընկերությունների մասին» օրենքը (2002),
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենք (2005),
- «ՀՀ Անտառային օրենսգիրքը» (2005),
- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք (1998),

- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք (1996),
- «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Հողի օգտագործման հսկողության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (2008 թ.),
- «Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենքը (2006),
- «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի N 1325-N որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում,
- «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշում,
- ՀՀ Առողջապահության նախարարի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու մասին հրաման,
- «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եվ օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում,
- «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին մերկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում:

Գնահատման ընթացքում հաշվի են առնվել նաև բնապահպանական այլ օրենքների որոշ դրույթներ: Դրանք առնչվում են օդի պահպանությանը, մշակութային և պատմության հուշարձաններին, բուսական և կենդանական աշխարհներին, ջրօգտագործմանը, սեյսմիկ պաշտպանությանը, թափոններին, հիգիենային և աշխատողների պաշտպանությանը, ինչպիսիք են`

***Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք***

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կար-գավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված

02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են "Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին" (29.05.2006 թիվ 750-Ն), "Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահաջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին" (24.08.2006 թիվ 1277-Ն), "Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" (02.11.2017 թիվ 1404-Ն), ինչպես նաև 02.11.2017 N1404-Ն որոշումները:

ՀՀ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը» ընդունվել է է ՀՀ փոխվարչապետի N1352-Ն հրամանով:

***Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք***

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

***Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք***

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

*«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, խմբագրված՝ 03.05.2023թ. (ՀՕ-150-Ն)*

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա” և ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունն իրանացվում է մեկ փուլով՝ երկու հանրային լսումներով: Առաջին հանրային լսումը կազմակերպվում է ազդակիր համայնքի կողմից: Հանրային լսումից և քննարկումից հետո, քննարկման նյութերը, ՇՄԱԳ հաշվետվությունը և օրենքով պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ շրջակա մջավայրի նախարարություն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննությունը տևում է 80 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են երկրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

*“Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին” ՀՀ օրենք /12.12.1992թ./*

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

*«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի*

***պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք***

Օրենքն ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը:

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

***Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք***

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

***Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք***

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

***Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք***

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարի 26.11.2006 թ. N 342-Ն հրամանով հաստատել է «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը»:

ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

***Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման "Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում" N2–III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին"***

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

***Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներ:***

***Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման "Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆ 2.2.4-009-06 հաստատելու մասին"***

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

### 3.2. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային նապահպանական կոնվենցիաներին

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ՝ առաջինը ստորագրելով Ռամսարի կոնվենցիան 1993 թ.-ին՝ խոնավ տարածքների պահպանության մասին: Այս ծրագրի համար առանձնահատուկ կարևորություն ունի այն փաստը, որ ՀՀ-ն փոխարինել է նախկին ԽՍՀՄ սահմանումներով մշակված բույսերի և կենդանիների Կարմիր գրքերը՝ ԲՊՄՄ չափորոշիչներին համապատասխան: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը հիմնված է ԲՊՄՄ Կարմիր գրքերի վրա: Աղյուսակ 1-ում թվարկվում են համաշխարհային և տարածաշրջանային նշանակության բնապահպանական և մշակութային միջազգային այն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք ստորագրվել և/կամ վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

*Աղյուսակ 1: Միջազգային բազմակողմանի բնապահպանական համաձայնագրեր, որոնք ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:*

| | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971) | 1993 | 1993 | Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ. | |
| 2 | Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992) | 1993 | 1992 | 1993 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 3 | Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթեգենյա, 2000) | 2004 | 2000 | 2004 | |
| 4 | Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992) | 1994 | 1992 | 1993 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 5 | Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997) | 2005 | 1997 | 2002 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ |
| 6 | Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (Ժնև, 1979) | 1997 | 1979 | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| 7 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային համատեքսում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպու, 1991թ.) | 1997 | 1991 | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| | «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.) | 2011 | 2003 | 2010 | |
| 8 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.) | 1997 | 1992 | 1996 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |
| | Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին արձանագրություն (Կիև, 2003) | | 2003 | | |
| 9 | Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994) | 1997 | 1994 | 1997 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ |

| | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| 10 | Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989) | 1999 | 1989 | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| 11 | Օզոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985) | 1999 | 1989 | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| | Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987) | 1999 | 1987 | 1999 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ |
| 12 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.) | 2001 | 1998 | 2001 | |
| 13 | Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998) | 2003 | 1998 | 2003 | |
| 14 | ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Հելսինկի, 1992թ.) | 1997 | 1992 | 1996 | |
| | Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999) | | | | Վավերացման գործընթացում է |
| 15 | Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001) | 2004 | 2001 | 2003 | |
| 16 | Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (Ժնև, 1976) | 2002 | 1976 | 2001 | Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ |
| 17 | Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000) | 2004 | 2000 | 2004 | |
| 18 | Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության | 1993 | 1972 | 1993 | Որպես իրավահաջորդ |

| | Կոնվենցիա կամ արձանագրություն. ընդունման օրն ու վայրը | Ուժի մեջ է մտել | Ստորագրվել է | Վավերացվել է | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|
| | պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972) | | | | անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ. |
| 19 | Էներգետիկ կանոնադրության պայմանագիր (Լիսաբոն, 1994 թ.) | | 1994 | | |
| | Էներգախնայողության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ էներգիայի կանոնադրության արձանագրություն (Լիսաբոն, 1994) | | 1994 | | |
| 20 | Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրախորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979) | 2008 | 1979 | 2008 | |

### 3.3. Վարչական (կազմակերպական) շրջանակը

Այս բաժնում ներկայացված են նախագծի իրականացման մեջ ներառված հիմնական մասնակիցները և ամփոփվում է դրանց դերը եւ պարտականությունները, առաջնահերթ, բայց ոչ բացառապես բնապահպանական տեսանկյունից:

***Իրականացնող գործակալություն (ԻԳ)***

Ներկայացվող գործունեության պատվիրատու է հանդիսանում՝ ՀՀ «Մալխասյանց 12» ՍՊԸ-ն, որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Երևան, Արաբկիր, Մալխասյանց փ. /6/1 15, 0051:

Մասնավորապես ՇՄՍԱԳ շրջանակներում, ԻԳ-ն պատասխանատու է լինելու ամբողջ նախագծի իրականացման մոնիթորինգի համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- Հետևել, որ բնապահպանական կառավարման պլանի բոլոր պահանջները՝ (ներառյալ բնական միջավայրի պահպանության պլանավորումը և մեղմացնող միջոցառումները), կապված նախագծի իրականացման հետ, պատշաճորեն ներառվեն ծրագրի մրցութային փաստաթղթերի մեջ:
- Հետևել, որ բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և/կամ համաձայնությունները, որոնք պահանջվում են համապատասխան կառավարական մարմինների կողմից, կառուցողը ստանա նախքան նախագծի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

➢ Համոզվել, որ կառուցողները (կապալառուներ) լիարժեք կերպով պատկերացնում են իրենց պարտականությունները՝ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների մեղմացման հարցում՝ կապված ԲԿՊ իրականացման ընթացքում աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման հետ:

➢ Կառուցողի կողմից ԲԿՊ իրականացման մոնիթորինգ, համաձայն մոնիթորինգի պլանի:

*Շինարարական Կապալառուն (ՇԿ)*

Նախատեսվող բազմաբնակարան շենքը կառուցելու է շինարարական կապալառու ընկերությունը:

Կառուցողը պատասխանատու է բնապահպանական կառավարման համար, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

- համապատասխան օրենքների, կանոնակարգերի եւ ստանդարտների պահանջների ապահովում
- անհրաժեշտ թույլտվությունների եւ / կամ համաձայնությունների ձեռք բերում
- իրականացնել մեղմացնող միջոցառումներ՝ շինարարական փուլի ազդեցությունները նվազեցնելու համար
- ապահովել բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների իրականացումը
- հետևել, որ պահպանվեն առողջության և անվտանգության պահանջները:

*ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն*

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ մի քանի առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

✓ Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

*ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն*

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

- Օգտակար հանածոների պաշարների գործակալություն,
- Ընդերքի տրամադրման գործակալություն,
- Էներգետիկայի պետական տեսչություն,
- Ընդերքի պետական տեսչություն,
- Ջրային տնտեսության պետական կոմիտե:

*ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին*

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ստեղծվել է համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության հիման վրա: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

*Առողջապահության նախարարություն*

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում եւ իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Նախարարության կազմում գործում են.

<u>Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումները.</u>

- Բժշկական օգնության քաղաքականության վարչություն,
- Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
- Դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն,

- Հանրային առողջության բաժին,
- և այլն:

# 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ներկայացված գործունեությունը նախատեսվում է իրականացնել է ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր վարչական տարածքի Մալխասյանց փողոց հ.6/3 հողամաս և հ.8 շինություն հասցեներում: Գործունեության համար հայցվող տարածքը գտնվում է Մալխասյանց փողոցի անմիջական հարևանությամբ, Հայ-ռուսական համալսարանից մոտ 380մ (դեպի արևելք) հեռավորության վրա, իսկ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրից մոտ 1100մ (դեպի հյուսիս-արևմուտք), հեռավորության վրա:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականների՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (ՎԿԱՅԱԿԱՆ N 14122022-01-0027) և բնակելի կառուցապատման (ՎԿԱՅԱԿԱՆ N 14122022-01-0136):

**Հողատարածքի մակերեսը և կադաստրային ծածկագրերը ներկայացված են ստորև.**

*Աղյուսակ 2: Տեղամասի տվյալները*

| N | Բնակավայր | Կադաստրային ծածկագիր | Մակերես (հա) |
|---|---|---|---|
| 1 | Երևան, Արաբկիր վարձական շրջան | 01-003-0208-0026 | 0.3392 |
| 2 | Երևան, Արաբկիր վարչական շրջան | 01-003-0208-0059 | 0.038 |

Կառույցը գտնվում է Մալխասյանց փողոց 6/3 և հ.8 շինություն հասցեում: Կառույցը բաղկացած է երկու մասնաշենքերից՝ բազմաբնակարան բնակելի շենքից և բազմահարկ ավտոհանգրվանից:

Ներկայացված տարածքները ըստ սեփականության իրավունքի պատկանում են «Մալխասյանց 12» ՍՊԸ-ին:

*<u>Նախատեսվող գործունեության նպատակային նշանակությունը.</u>*

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Մախաայանց փողոցում

բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցումը միտված է բնակելի ֆոնդի արդիականացմանը, բնակիչների կյանքի որակի բարձրացմանը և տարածքի քաղաքաշինական զարգացումին: Նախագծի հիմնական նպատակային ուղղություններն են՝

- **Բնակարանային ֆոնդի համալրում և արդիականացում՝** Նորակառույց շենքը կավելացնի ժամանակակից պահանջներին համապատասխանող բնակարանների քանակը՝ ապահովելով բնակիչների համար հարմարավետ և ապահով կեցության պայմաններ:
- **Քաղաքաշինական միջավայրի բարելավում՝** Շենքի և հարակից տարածքի բարեկարգումը կնպաստի տարածքի ընդհանուր տեսքի և օգտագործման հարմարավետության բարձրացմանը՝ ներդաշնակվելով Արաբկիր վարչական շրջանի զարգացող միջավայրին:
- **Ենթակառուցվածքների զարգացում՝** Նախագծով նախատեսվող ավտոհանգրվանային մասնաշենքը կլուծի տարածքում առկա կայանման խնդիրները, կնպաստի երթևեկության ծանրաբեռնվածության նվազեցմանը և բնակիչների համար կստեղծի հարմարավետություն:
- **Բնակչության կյանքի որակի բարձրացում՝** Շենքի նախագծման ընթացքում հաշվի են առնվել սեյսմակայունության, էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի պահպանման պահանջները, ինչը կապահովի առողջ և անվտանգ բնակելի միջավայր:
- **Տնտեսական ակտիվության խթանում՝** Շինարարական աշխատանքների և հետագա շահագործման արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր, իսկ տարածքի բնակեցումը կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Տարածքին մոտ կան բնակելի շենք-շինություններ, որոնց վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառելու նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումներ, ներկայացված են սույն հաշվետվության ԲԿՊ-ում:

Տարածքում և դրա հարևանությամբ չկան ջրային աղբյուրներ (գետեր, լճեր), ինչպես նաև պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ: Տարածքը պատկանում է «Մալխասյանց 12» ՍՊԸ-ին, գտնվում է Երևան քաղաքի խիստ ուրբանիզացված գոտում և երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության:

Տարածքում չեն արձանագրվել ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

Տարածքի իրադրային սխեման, գլխավոր հատակագիծը և կադաստրային քարտեզը ներկայացված են ստորև.

*Պատկեր 1: Նախատեսվող գործունեության տարածքի իրադրության սխեման*



*Պատկեր 2: Գլխավոր հատակագիծ*






*Պատկեր 3: Հատվածներ՝ կադաստրային քարտեզից*




| | Կոորդինատներ | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 8458205.5070 | 4453236.8915 |
| 2 | 8458201.7595 | 4453237.7064 |
| 3 | 8458196.1772 | 4453238.8373 |
| 4 | 8458182.5405 | 4453241.5999 |
| 5 | 8458176.5379 | 4453242.7377 |
| 6 | 8458175.4522 | 4453242.9366 |
| 7 | 8458175.2933 | 4453242.2276 |
| 8 | 8458168.0135 | 4453243.9023 |
| 9 | 8458160.7138 | 4453245.4756 |
| 10 | 8458154.3773 | 4453246.7516 |
| 11 | 8458153.8593 | 4453246.8526 |
| 12 | 8458149.4632 | 4453247.7066 |
| 13 | 8458123.2169 | 4453252.6517 |
| 14 | 8458115.1177 | 4453254.2847 |
| 15 | 8458111.7627 | 4453254.8717 |
| 16 | 8458111.6905 | 4453249.6721 |
| 17 | 8458111.6117 | 4453244.0046 |
| 18 | 8458111.1132 | 4453209.4262 |
| 19 | 8458127.0709 | 4453209.3851 |
| 20 | 8458156.9630 | 4453209.3851 |
| 21 | 8458181.4001 | 4453204.6076 |
| 22 | 8458192.0252 | 4453202.5287 |
| 23 | 8458195.7349 | 4453201.7610 |
| 24 | 8458196.9400 | 4453206.0864 |
| 25 | 8458198.1439 | 4453210.4152 |
| 26 | 8458152.5384 | 4453236.8419 |
| 27 | 8458152.7293 | 4453237.8235 |
| 28 | 8458153.8068 | 4453243.7264 |
| 29 | 8458153.9977 | 4453244.7080 |
| 30 | 8458165.9432 | 4453242.3850 |
| 31 | 8458164.4160 | 4453234.5320 |




| | Կոորդինատներ | |
|---|---|---|
| | X | Y |
| 1 | 8458156.9830 | 4453209.3851 |
| 2 | 8458127.0709 | 4453209.3851 |
| 3 | 8458111.1132 | 4453209.4262 |
| 4 | 8458110.4278 | 4453209.4280 |
| 5 | 8458110.3128 | 4453203.5801 |
| 6 | 8458126.7992 | 4453203.3601 |
| 7 | 8458181.1410 | 4453202.9205 |
| 8 | 8458181.4001 | 4453204.6076 |

# 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 5.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

ՀՀ տարածքը զբաղեցնում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան հատվածը, որը կազմված է ալպիական լեռների ձևավորման գործընթացների արդյունքում առաջացած երիտասարդ ալիքավոր լեռնաշղթաներից, որը կոչվում է Փոքր Կովկաս, ինչպես նաև հյուսիս-արևելքում տեղակայված հրաբխային կազմավորման զանգվածներից, որոնք կազմում են Հայկական հրաբխային բարձրավանդակի մի մասը (Արագած, Արա, Հատիս և Գեղամա ևն):

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա- բազալտներ, հրաբխային խարամ և մոխիր, հրաբխային ավազներ և այլն, որոնք ծածկված են բերվածքային առաջացումների շերտախմբերով ՝ խոշորա-բեկորային, մասամբ կավային, ավազային գրունտներով:

Ներկայացված տարածքը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1180մ բարձրության վրա: Տարածաշրջանում գերակշռում են ցածրադիր լեռնային հարթությունները՝ մինչև 1500մ:

Ռելիեֆի ձևագրական տիպը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500մ):

*Պատկեր 4: Գործունեության տարածքի ռելիեֆը*




## 5.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում; Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ–Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները: Բեկվածքների այս զոնաները թափանցում են երկրկեղևի 40-50 մետր խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10 կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Քանաքեռ-Արաբկիր հրաբխային սարավանդի սահմաններում, նրա կենտրոնական մասում, էռոզիոնա- հողմնահարման լանջերի վրա, Հրազդան գետի ձախափնյա տափարակի սահմաններում:

*Պատկեր 5: Երկրկեղևի հիմնական խորքային բեկվածքները*




Պատկեր 6: ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարձության կայքից: a=0.2g, մինչև 3 բալ, a= 0.3g, 3-ից 9 բալ, a=0.4g, 9 և ավելի բալ, a=0.5g, կործանարար երկրաշարժ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՅՍՄԻԿ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ**
**SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA**




Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ$^2$ է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ a=400 սմ/վրկ$^2$, A= 0.4g :

*Պատկեր 7: Սեյսմիկ գոտիների քարտեզ*




## 5.3. Հիդրոերկրաբանություն

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Գրունտային ջրերը հորատանցքերով մինչև 30.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 50.0 մետրից խորը: Սակայն մակերեսային ջրերը ներթափանցելով գրունտային զանգվածների խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային առաջացումների պալեոռելիեֆի "փոս ընկած", ճկված, խորդուբորդությունների մասերում, կարող են առաջացնել "թաքնված" ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր(վերնաջրեր):

Ուսումնասիրվող տարածքում բացակայում են Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

**5.4. Կլիմա և օդային ավազան**

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լուսավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող օդնրևույթաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները:

Կլիմայական պայմանների մանրամասն ցուցանիշները ներկայացված են ստորև՝ աղյուսակներում: Ընդհանուր առմամբ Ծրագրի համար հայցվող տարածքը գտնվում է ցածրադիր կլիմայական շրջանում, որտեղ. Ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0-5°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ներկայացված Ծրագրի իրականացման ամենմոտ օդերևութաբանական ցուցանիշները վերլուծելով, կարելի է նշել, որ դիտարկվել է 41.9 °C օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճան և -20.6 °C բացարձակ նվազագույն ջերմաստիճան, ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը կազմել է 68% և ամենաշոգ ամսվանը՝ 37%, մթնոլորտային միջին տարեկան տեղումները կազմում են 354մմ, իսկ տարվա մեջ միջին ձնածածկ օրերի քանակը՝ 53: Առանց արևի օրերի քանակը կազմում է տարեկան 61օր/2679ժ. (Երևան «Ագրո»):

Կլիմայի և օդային ավազանի մասին տեղեկատվական ցուցանիշները վերցված են Ծրագրի համար հայցվող տարածքին ամենամոտը գտնվող «Երևան» (Արաբկիր) օդերևութաբանական դիտակետից:

*Աղյուսակ 3: Օդի միջին ջերմաստիճանը, °C*

| Բնակավայրի անվանումը | Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Բացարձակ նվազագույն | Բացարձակ առավելագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | | |
| Երևան «Արաբկիր» | -2,7 | -0,2 | 5,8 | 11,9 | 16,6 | 21,3 | 24,9 | 24,7 | 20,4 | 13,7 | 6,6 | 0,2 | 11,9 | -20,6 | 41,9 |

*Աղյուսակ 4: Օդի հարաբերական խոնավությունը (%)*

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը. % | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | միջինը ժամը 15-ին | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | | Ամենա-ցուրտ ամսվա | Ամենաշոգ ամսվա |
| Երևան «Արաբկիր» | 77 | 70 | 60 | 57 | 57 | 52 | 50 | 50 | 51 | 60 | 68 | 77 | 61 | 68 | 37 |

*Աղյուսակ 5: Մթնոլորտային տեղումները*

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան |
| | I | II | III | IV | V | VI | VII | VII I | IX | X | X I | XII | |
| Երևան «Արաբկիր» | 28 | 31 | 38 | 52 | 54 | 27 | 18 | 8 | 13 | 29 | 29 | 27 | 354 |
| | 25 | 28 | 44 | 34 | 47 | 47 | 34 | 22 | 47 | 34 | 48 | 26 | 48 |

*Աղյուսակ 6: Ձյան ծածկույթ*

| Բնակավայրի անվանումը | Ձյան ծածկույթը | | | |
|---|---|---|---|---|
| | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ | Գրունտի սառչման առավելագույն խորությունը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Երևան «Արաբկիր» | 50 | 53 | 152 | - |

*Աղյուսակ 7: Քամի*

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (hՊա) | Ամիսներ | Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | Անհողմությունների կրկնելիությունը,% | Միջին ամսական արագությունը,մ/վ | Միջին տարեկան արագությունը,մ/վ | Ուժեղ քամիներով (☐15մ/վ☐) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը , մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հյուսիսային (Հս) | Հյուսիս- Արևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավ- Արևելյան (ՀվԱրլ) | Հարավ (Հվ) | Հարավ- Արևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիս- Արևմտյան (ՀսԱրմ) | | | | | 20 | 50 | 100 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Երևան «Արաբկր» | 889,8 | Հունվար | 13 | 29 | 8 | 7 | 14 | 20 | 6 | 3 | 45 | 0.9 | 1,9 | 28 | 22 | 24 | 26 |
| | | | 1,9 | 1,9 | 1,6 | 1,7 | 1,8 | 1,5 | 1,8 | 1,9 | | | | | | | |
| | | Ապրիլ | 15 | 29 | 6 | 8 | 12 | 17 | 9 | 4 | 15 | 2,1 | | | | | |
| | | | 3,1 | 2,6 | 2,3 | 2,2 | 2,5 | 2,4 | 2,5 | 2,5 | | | | | | | |
| | | Հուլիս | 28 | 32 | 3 | 3 | 8 | 16 | 7 | 3 | 13 | 3,4 | | | | | |
| | | | 6,0 | 4,8 | 1,7 | 1,7 | 1,7 | 1,7 | 2,0 | 2,6 | | | | | | | |
| | | հոկտեմ-բեր | 17 | 37 | 6 | 5 | 10 | 16 | 6 | 3 | 19 | 1,8 | | | | | |
| | | | 2,9 | 2,5 | 2,0 | 1,9 | 1,7 | 1,9 | 1,9 | 2,0 | | | | | | | |

*Աղյուսակ 8: Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը*

| **Բնակավայրի անվանումը** | **Սկիզբ** | **Վերջ** | **Տևողություն, օր** |
|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** |
| Երևան «Արաբկիր» | 16 դեկտեմբեր | 14 փետրվար | 61 |

*Աղյուսակ 9: Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)*

| Բնակավայրի անվանումը | Արևափայլի տրողությունը և առանց արևի օերերի քանակը | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տևողությունը | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան |
| | | I | II | III | IV | V | VI | VII | VII I | IX | X | X I | XII | |
| Երևան «Ազրո» | ժ | 101 | 141 | 187 | 210 | 266 | 327 | 354 | 333 | 291 | 217 | 161 | 91 | 2679 |
| | օր | 10 | 6 | 3 | 2 | 1 | 0.04 | 0.04 | 0.1 | 0.3 | 5 | 5 | 12 | 41 |

## 5.5. Մթնոլորտային օդ

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ:

Մթնոլորտային օդի որակի ուսումնասիրությունները կատարվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից՝ դիտակետերի միջոցով: ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշումը հաստատում է «բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի

սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները։

Ծրագրի իրականացման շրջանակներում՝ օդի որակի գնահատումը իրականացվելու է ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 611-L որոշման պահանջներին համապատասխան։

Համաձայն ՊՈԱԿ 2024 թվականի ամփոփագրի Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան։

2024 թվականի ընթացքում փոշու, ազոտի և ծծմբի երկօքսիդների օրական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ները համապատասխանաբար՝ 1.1-5.1 (տարվա ընթացքում 300 օր), 1.1-2.1 (60 օր) և 1.1-1.5 (11 օր) անգամ։ Փոշու առավելագույն կոնցենտրացիան (762մկգ/մ³) դիտվել է դեկտեմբերի 9-ին՝ Կենտրոն համայնքում, ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (84մկգ/մ³)՝ փետրվարի 8-ին՝ Նոր Նորք համայնքում, ծծմբի երկօքսիդի առավելագույն կնցենտրացիան (76մկգ/մ³)՝ փետրվարի 3-ին՝ Արաբկիր համայնքում։

Մայրաքաղաքում աղտոտվածությունը կարող է պայմանավորված լինել բնակլիմայական պայմաններով, աղտոտման աղբյուրներով (տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը), ինչպես նաև կանաչ տարածքների սակավությամբ։

Քաղաքի մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ*, ըստ մթնոլորտն աղտոտող 4 վնասակար նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ 1.7 (փոշի՝ 0.84, ծծմբի երկօքսիդ՝ 0.41, ազոտի երկօքսիդ՝ 0.38, գետնամերձ օզոն՝ 0.06)։

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի նվազման, ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի՝ աճման տենդենց (Աղյուսակ 10)։

*Աղյուսակ 10։ Երևանի օդային ավազանի աղտոտվածության ցուցանիշները*

| Որոշվող միացություն (դիտակայանների քանակ) | Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մկգ/մ³ (դիտակայանի համար) | ՍԹԿ-ից գերազանցումների քանակ (օրերի թիվ) | Միջին տարեկան կոնցենտրա-ցիա, մկգ/մ³ | ՍԹԿ միջին օրական, մկգ/մ³ |
|---|---|---|---|---|

| | | >1 ՍԹԿ | >5 ՍԹԿ | | |
|---|---|---|---|---|---|
| Փոշի (5) | 762, Կենտրոն (Լուսավորիչ Ագաթանգեղոս խաչմերուկ) | 300 | 1 | 126 | 150 |
| Ծծմբի երկօքսիդ (5) | 76, Արաբկիր (Կոմիտաս 29) | 11 | 4 | 20 | 50 |
| Ազոտի երկօքսիդ (5) | 84, Նոր Նորք (Գայի 32) | 60 | 0 | 19 | 40 |
| Գետնամերձ օզոն (5) | 27 Արաբկիր (Կոմիտաս 29) | 0 | 0 | 6 | 30 |

*Պատկեր 8: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց*




## 5.6. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակ 11-ում:

*Աղյուսակ 11: ՀՀ սահմանված աղմուկի նորմերը*

| Ընկալիչ | Ժամերը | Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը dBLAEQ | dBLAMAX |
|---|---|---|---|
| Բնակելի և հասարակական շենքերի մոտ | 07:00-23:00 | 55 | 70 |
| | 23:00-07:00 | 45 | 60 |

*Աղյուսակ 12: Լարվածության եվ ծանրության տարբեր կատեգորիաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով*

| Աշխատանքային գործընթացի լարվածության կարգ | Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | թեթև ֆիզիկական ծանրաբեռն-վածություն | միջին ֆիզիկական ծանրաբեռն-վածություն | 1 աստիճանի ծանր աշխատանքի | 2 աստիճանի ծանր աշխատանքի | 3 աստիճանի ծանր աշխատանքի |
| Թեթև աստիճանի լարվածություն | 80 | 80 | 75 | 75 | 75 |
| Միջին աստիճանի լարվածություն | 70 | 70 | 65 | 65 | 65 |
| Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն | 60 | 60 | | | |
| Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն | 50 | 50 | | | |

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները (հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է Երևան քաղաքի ծիստ ուրբանիզացված հատվածում): Ելակետային իրավիճակում հայցվող տարածքում աղմուկի մակարդակը միջինից-բարձր է, քանի որ տեղանքը բավականին խիտ բնակեցված է: Գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին են:

## 5.7. Ջրային ռեսուրսներ

ՀՀ կառավարության կողմից "Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին" որոշման (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) սահմանված է ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի

գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար: Տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ գերազանց (1-ին դաս), լավ (2-րդ դաս), միջակ (3-րդ դաս), անբավարար (4-րդ դաս) և վատ (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը (հետագայում՝ ՊՈԱԿ):

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական 40-65 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Համաձայն ՊՈԱԿ 2024 թվականի ամփոփագրի Հրազդան գետի ջրի որակը Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ հատվածում՝ նիտրիտ իոնով: Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

**Նախատեսվող գործունեության տարածքում և դրա հարևանությամբ առկա չեն ջրային ռեսուրսներ, որոնք կարող են ենթարկվել որևէ ազդեցության Ծրագրի իրականացման շրջանակներում:**

### 5.8. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում ռելիեֆը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500մ):

Խոշորա-բեկորային գրունտները ներկայացված են կարբոնատային կեղևով,

խճային, մեծաբեկորային և խարամային գրունտներով: Կիսաժայռային և ժայռային գրունտները ներկայացված են Նեոգեն-Չորրրդականի հասակի բազալտ, անդեզիտա-բազալտներով, ճեղքավորված,մասամբ մեծաբեկորային, ջարդոտված, մասամբ թույլ խարամացած, խոռոչային տեղ-տեղ ջարդոտված խճի և քարակտորների աստիճանի:

Կավային գրունտները ներկայացված են, բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սակավախոնավ կավավազներով, որոնք կառուցապատման տեսակետից հետաքրքրություն չեն ներկայացնում, ունեն ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների թույլ ցուցանիշների, ցուցաբերում են ենթառողղամաշման առանձնահատկություններ:

Հողերի էրոզվածության աստիճանը V-րդ կարգի է՝ 45-70%:

*Պատկեր 8. Հողերի էրոզվածությունը*




| աստիճանը (կարգը) | % | մակերեսը* (հազ. հա) | այդ թվում չէրոզացված հազ. հա | չէրոզացված % | թույլ էրոզացված հազ. հա | թույլ էրոզացված % | միջին էրոզացված հազ. հա | միջին էրոզացված % | ուժեղ էրոզացված հազ. հա | ուժեղ էրոզացված % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | մինչև 1 | 587,7 | 583,5 | 99,3 | 4,2 | 0,7 | — | — | — | — |
| II | 1-10 | 84,2 | 76,0 | 90,3 | 7,0 | 8,3 | 1,2 | 1,4 | — | — |
| III | 10-25 | 140,0 | 105,1 | 75,1 | 30,5 | 21,8 | 3,3 | 2,3 | 1,1 | 0,8 |
| IV | 25-45 | 578,3 | 322,6 | 55,8 | 182,2 | 31,5 | 55,7 | 9,6 | 17,8 | 3,1 |
| V | 45-70 | 674,3 | 276,5 | 41,0 | 267,5 | 39,7 | 103,0 | 15,3 | 27,3 | 4,0 |
| VI | 70-ից ավելի | 635,5 | 64,6 | 10,2 | 135,6 | 21,3 | 285,1 | 44,9 | 150,2 | 23,6 |
| | Ընդամենը | 2700,0 | 1428,3 | 52,9 | 627,0 | 23,2 | 448,3 | 16,6 | 196,4 | 7,3 |
| Արմատական ապարների մերկացումներ | | *Առանց կառույցների և ջրային ավազանների | | | | | | | | |

## 5.10. Բուսական և կենդանական աշխարհ

### <u>5.10.1 Կենդանական և բուսական աշխարհ</u>

Երևանի ֆլորիստիկական շրջանի բուսականությունը կիսաանապատային է՝ անցողիկ բուսատեսակների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնական ճանապարհով ծառեր չեն աճում,

բացառությամբ մի քանի կիսաթփերի: Ուստի Երեւանում ծառեր ու թփեր կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայության դեպքում:

Երևանի լանդշաֆտում հանդիպում են բույսերի համակեցության հետևյալ 2 ենթատեսակները՝ 1. Phrygana (ժայռային բուսականություն), 2. Tomilyar (անապատային): Տարածքները բնութագրվում են հիմնականում կիսաանապատային բուսածածկույթի քարաֆիլ տարբերակներով՝ վաղանցիկ և հալոֆիլ, անապատային բուսատեսակներով:

Պետք է հաշվի առնել, որ նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից՝ առկա է տրանսպորտային միջոցների երթևեկություն և աղմուկ, ինչի արդյունքնում ներկայացված բուսատեսակները ինչպես նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բուն նախատեսվող գործունեության և դրան հարակից տարածքներում բացակայում են:

**Ըստ հետազոտությունների, բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցման համար նախատեսված տարածքներում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրացնված բուսատեսակներ և կենդանատեսակներ:**

**Ազդեցությունը կանխատեսվում է որպես ոչ էական, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքը աղքատ է բուսական աշխարհով: Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ տարածքը երկար տարիների ընթացքում ենթարկվել է մարդածին ազդեցության:**

**5.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Նախատեսվող գործունեության տարածքը չի ընկնում որևէ բնության հատուկ պահպանվող տարածքում, ինչպես նաև տարածքի հարևանությամբ չկան ԲՀՊՏ-ներ: Ներկայացված տարածքին ամենամոտը «Էրեբունի» պետական արգելոցն է, որը գտնվում է ավելի քան 14.6կմ հեռավորության վրա:

**Ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում ազդեցություն որևէ ԲՀՊՏ-ի վրա չի նախատեսվում, քանի որ գործունեության համար ընտրված տարածքը գտնվում է մոտկա ԲՀՊՏ-ից ավելի քան 14.6կմ հեռավորության վրա:**

**5.12. Պատմամշակութային հուշարձաններ**

Համաձայն ՀՀ կառավարության 7 հոկտեմբերի 2004 թվականի N 1616-Ն որոշման՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման, Երևան քաղաքում, մասնավորապես Արաբկիր վարչական շրջանում կան բազում պատմամշակութային հուշարձաններ, որոնից սակայն ոչ մեկը չի կարող ենթարկվել ազդեցության, քանի որ դրանք գտնվում են Ծրագրի համար ներկայացված տեղամասից բավականին մեծ հեռավորությունների վրա:

### 5.13. Բնության հուշարձաններ

Համաձայն կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

*Աղյուսակ 13: Երևան քաղաքի բնության հուշարձանների ցանկը*

**Երկրաբանական**

| | |
|---|---|
| «Անանուն» սյունաձև բազալտներ | քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ |
| «Անանուն» սյունաձև բազալտներ | քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ |

**Ջրաեկրաբանական**
**Առկա չեն**

**Ջրագրական**
**Առկա չեն**

**Բնապատմական**
**Առկա չեն**

**Կենսաբանական՝**
**Առկա չեն:**

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում և չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության ներկայացված Ծրագրի իրականացման շրջանակներում:

### 5.14. Սոցիալական և մշակութային ռեսուրսներ

Ծրագրի առաջարկվող տարածքը գտնվում է Երևան մայրաքաղաքում:

**Երևան մայրաքաղաք**

Տարածքը՝ 223 կմ²;
Վարչական շրջաններ՝ 12 (https://armstat.am/file/Map/MARZ_01.pdf):
Բնակչության թվաքանակը 2024թ. տարեսկզբի դրությամբ՝ 1 106,3 հազ. մարդ:

Երևան քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևմուտքում, Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում: Երևանը ՀՀ մայրաքաղաքն է և հանդիսանում է երկրի խոշորագույն վարչաքաղաքական ու տնտեսական կենտրոնը: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը պատմական Հայաստանի 12-րդ մայրաքաղաքն է և խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև նախկին մայրաքաղաքների շարքում: Էրեբունի անվամբ բերդաքաղաքը հիմնադրել է Վանի թագավորության արքա Արգիշտի Ա-ն Ք.ա 8-րդ դարում՝ 782թ.-ին: Էրեբունին հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ, Բաբելոնի, Նինվեի ու Պերսեպոլիսի հասակակիցն է և ներկայում հանդիսանում է 21-րդ դարի ծաղկուն քաղաքներից մեկը:

Երևանը ՀՀ Նախագահի և ՀՀ վարչապետի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Մայրաքաղաքի բնակչության թվաքանակով ամենախոշոր վարչական շրջանը Մալաթիա-Սեբաստիան է, որտեղ 2024թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմել է 144.1 հազ.մարդ, իսկ ամենափոքրը Նուբարաշենն է՝ 11.7 հազ.մարդ բնակչությամբ:

Ներկայում Երևանը ՀՀ ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Երևանի արդյունաբերության հիմնական ուղղությունները սննդամթերքի, ծխախոտի, խմիչքի տարբեր տեսակների և հիմնային մետաղների արտադրություններն են:

2023թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են՝

➢ արդյունաբերություն - 40.9 %,
➢ շինարարություն - 49.2 %,
➢ մանրածախ առևտուր - 72.7 %,
➢ ծառայություններ - 86.2 %:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան, որը կառուցվել է 1899թ.-ին և Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր օդային դարպասը (շահագործման է հանձնվել 1980 թվականին): Երևանի տրանսպորտային համակարգի կարևոր մաս են կազմում նաև Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենը (գործում է 1981թ.-ից) և տրոլեյբուսային ուղիները:

*Աղյուսակ 14: Երևան քաղաքի հիմնական վիճակագրական տվյալները, 2019-2023թթ*

| | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|
| Երևան քաղաքի մշտական բնակչության թվաքանակը հունվարի 1-ի դրությամբ, 1 000 մարդ | 1 084.0 | 1 091.7 | 1 092.8 | 1 088.6 | 1 106.3 |
| Բնական աճի գործակիցը, 1 000 բնակչի հաշվով | 4.9 | 3.6 | 1.6 | 1.6 | 2.4 |
| Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ | 3 820 048.8 | 3 703 090.9 | 4 014 378.8 | 5 277 190.5 | … |
| Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ | 787 492.9 | 723 482.4 | 822 524.0 | 957 496.8 | 1 181 859.4 |
| Շինարարության ծավալը, ընթացիկ գներով մլն. դրամ | 239 944.2 | 248 713.8 | 219 429.5 | 258 239.0 | 333 799.8 |
| Ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ | 209.9 | 163.8 | 188.7 | 194.1 | 122.8 |
| Ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ | 1 577.6 | 475.9 | 773.5 | 1 213.6 | 1535.1 |
| Կապի ծառայությունների հասույթը, ընթացիկ գներով, մլն. դրամ | 131 557.4 | 121 134.6 | 126 806.1 | 137 543.5 | 139 234.2 |
| Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ | 1 136 630.8 | 931 761.7 | 1 065 063.6 | 1 238 817.5 | 1 427 890.6 |
| Ծառայությունների ծավալը, մլն. | 1 661 | 1 498 | 1 662 | 2 278 | 2 700 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դրամ | 798.6 | 067.6 | 544.4 | 465.1 | 904.5 |
| Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, % | 101.6 | 101.4 | 107.3 | 109.2 | 102.3 |
| Աշխատանքային ռեսուրսները, 1 000 մարդ | 705.6 | 659.3 | 675.3 | 803.5 | 838.2 |
| որից՝ զբաղվածներ | 341.1 | 307.6 | 299.1 | 392.3 | 426.7 |
| գործազուրկներ | 100.3 | 95.3 | 82.6 | 77.7 | 73.9 |
| Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ | 201 527 | 208 044 | 224 815 | 266 164 | 306 511 |
| Առևտրային կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման վրա կատարված ծախսերը, մլն.դրամ | 2 306 333.7 | 1 577 219.9 | 1 711 360.4 | 1 977 656.5 | 2 678 691.6 |
| Առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունների քանակը | 138 | 146 | 136 | 121 | 118 |
| Գրանցված հանցագործությունների քանակը | 14 961 | 13 892 | 16 438 | 21 604 | 20 231 |
| Կենսաթոշակառուների թվաքանակը տարեվերջին, մարդ | 173 451 | 173 386 | 172 944 | 174 821 | 178 002 |
| Նպաստառու ընտանիքների քանակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ | 13 695 | 13 832 | 12 638 | 10 804 | 9 946 |
| Նախադպրոցական հաստատությունների քանակը | 225 | 224 | 230 | 241 | 236 |
| Հանրակրթական դպրոցների քանակը | 249 | 252 | 252 | 251 | 251 |
| Պետական մասնագիտացված թատրոնների քանակը | 17 | 17 | 17 | 16 | 15 |
| Գործող թանգարանների քանակը | 63 | 63 | 63 | 63 | 63 |
| Գրադարանների քանակը | 34 | 34 | 34 | 34 | 34 |
| Մարզական կազմակերպությունների քանակը | 61 | 61 | 62 | 62 | 62 |

## 6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

### 6.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Բազմաբնակարան բնակելի շենքը հատակագծում ուղղանկյունաձև է և առաջին հարկում ունի 42.7մX24.0մ զաբարիտային չափսեր, որտեղ Մալխասյանց փողոցի կողմից շահագործվող հատվածի արտաքին պատը 2.6 մետր ներս է քաշված ճակատային գծից և դրանով ձևավորված է ճեմահարթակ (գալերեա): Բազմաբնակարան բնակելի շենքը ունի մեկ ստորգետնյա, 14 վերգետնյա հարկ:

Առաջին հարկում կազմակերված են շենքի գլխավոր մուտքերը, շքամուտքերը, երկրորդական էվակուացիոն ելքերը, ինչպես նաև գրասենյակային, հասարակական հինգ տարածքներ՝ իրենց մակերեսին համապատասխան նկուղային հարկերով: Ամեն մի տարածք նկուղի հետ կապվում է ներքին աստիճաններով: Երկրորդ հարկից (+5.70 նիշ) սկսած հարկերը տիպարային են: Ամեն հարկում նախատեսված են երկու չծխացող աստիճանավանդակներ, 4 վերելակներ՝ ամեն շքամուտքի համար երկուական, որոնք սպասարկելու են ամեն հարկում 22 բնակարան: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող: Հակահրդեհային են նաև առաջին հարկի դռները:

Ավտոհանգրվանի մասնաշենքը ունի ստորգետնյա մեկ և վերգետնյա 5 հարկեր: Վերջինս հատակագծում ուղղանկյունաձև է և կապվում է անմիջական հարևանությամբ կառուցված ավտոհանգրվանի հետ, որի մոտեցումից էլ օգտվելու է դեպի փողոց ելքի և մուտքի իրականացման համար: Նախատեսված է 96 մեքենայի համար, ինչպես նաև կարող են նաև անհրաժեշտության դեպքում արդեն կառուցված ավտոհանգրվանի հարյուրից ավել ազատ կայանատեղիները ծառայել շենքի բնակիչների կարիքները ապահովելու համար: Ավտոհանգրվանի պարփակող պատերն իրականացվում են կաղապարային բետոնով, որոնք հետագայում կանաչապատվում են մագլցող բույսերով: Ավտոհանգրվանի մասնաշենքի նկուղային հարկը ապահովված է շարժման սահմանափակումներ ունեցող մարդկանց համար նախատեսված սանհանգույցով: Նկուղային հարկը ունի երկակի նշանակություն և արտակարգ իրավիճակների դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց:

Բազմաբնակարան բնակելի շենքի արտաքին պարփակող պատերը իրականացվում են ջերմամեկուսիչ կաղապարային բետոնով, ցեմենտոբրրդի թերթերով, որոնք ներկվում են մուգ մոխրագույն երանգի մթնոլորտակայուն բարձրորակ ֆասադային ներկով և ստացվելու է մուգ երանգի բետոն ֆակտուրա:

Ներքին աստիճանավանդակները, արտաքին աստիճանները և հարթակները երեսպատվում են բազալտե և տրավերտինե սալերով: Հատակները 100 մմ

հաստության շերտով են, որոնց միջով իրականացվում են ջեռուցման խողովակների ցանցը: Շենքում նախատեսվում է կենտրոնացված ջեռուցում, օդափոխություն և օդորակում:

Ներքին բակը ամբողջությամբ կանաչապատվում է և հագեցած է լինելու դեկորատիվ ծառերով, թփերով և ծաղկանոցներով: Հրշեջ մեքենայի մոտեցման համար ճանապարհը նաև ծածկված է լինելու սիզամարգով: Տարածքն հիմնականում ամբողջությամբ կանաչապատ է լինելու, որոշ հատվածներում իրականացվելու են ջրանցիկ մակերևույթներ՝ տրավերտինե սալիկների կամ տոմետների տեսքով: Շենքերի տանիքները հարթ են և ամբողջությամբ կանաչապատ տերասսաներ են հանդիսանում: Շարժման սահմանափակումներ ունեցողների համար մուտքային հատվածում իրականացվելու են թեքահարթակներ, իսկ հասարակական բոլոր տարածքներում նախատեսված են սանհանգույցներ: Նախատեսված է նաև մայթի բարեկարգում:

Տեխնիկական ցուցանիշներ՝

- Հարկայնությունը – 14 վերգետնյա հարկեր
- Բնակելի – 13 վերգետնյա հարկեր
- Հասարակական – 1 վերգետնյա հարկ
- Նկուղային – 1 հարկ
- Ավտոկայանատեղի (ընդհանուր 96 + 130 մեքենայի համար)
- Վերգետնյա – 5 հարկ
- Ստորգետնյա – 1 հարկ
- Հողամասի տարածքը – 0.3772 հա
- Կառուցապատման մակերեսը – 1483.0 մ$^2$ – 39.3%, որից՝
  - բնակելի շենքի կառուցապատման մակերես - 1025մ$^2$:
  - ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցապատման մակերես – 458մ$^2$:
- Բնակելի շենքի ընդհանուր մակերես – 14850.0 մ$^2$
- Ավտոհանգրվանի ընդհանուր մակերես – 2600.0 մ$^2$
- Կանաչապատման մակերես – 1960.0 մ$^2$ – 52% + (1400մ$^2$ – տանիքների կանաչապատ տարածք)
- Ջրանցիկ մակերես – 170.0 մ$^2$
- Անջրանցիկ մակերես – 25.0 մ$^2$
- Բնակելի շենքի ստորգետնյա կառուցապատման մակերես – 1025.0 մ$^2$
- Ավտոհանգրվանի ստորգետնյա կառուցապատման մակեսրես – 458.0 մ$^2$

## Տարածական տեսքեր

Մինչ կառուցապատումը





Կառուցապատումից հետո





## 6.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

*Բետոն*

Նախագծում նախատեսված է հիմնականում միաձույլ երկաթբետոն B25 դասի բետոն: Առաջարկվում է BCC պլաստիֆիկատորի օգտագործում բետոնի մեջ:

Պլաստիֆիկատորի օգտագործումը բերում է՝

- Ջրի պարունակության նվազեցման առանց խառնուրդի պիտանելիության վնասման
- Ցեմենտի խնայողության մոտավորապես 10%-ով (տե՛ս ստորև բերվող օրինակում)
- Ավելի ամուր, խիտ բետոնի ստացման
- Ավելի ամուր, մաշակայուն և ցրտադիմացկուն մակերևույթի առաջացման
- Բետոնը առավել քիչ է թափանցելի օդի, ագրեսիվ գազերի ու հեղուկների նկատմամբ
- Սեղմման նվազեցում և ֆազաբաժանման ու հոսունության բացառման:

Բետոնի տեղադրումը առաջարկվում է իրականցնել հիմնականում

բետոնապոմպերի օգնությամբ, որոշ հատվածներում շինկոնքի օգնությամբ:

***<u>Քարե և սնամեջ բետոնյա բլոկների շարվածք</u>***

Նախագծում նախատեսվում է տուֆ քարե շարվածքի իրականացում:

Շարվածքի համար քարը պետք է լինի ամուր, պինդ և երկայակյաց առանց կլիվաժի և դեֆեկտների: Քարե շարվածքը պետք է լինի նույն չափի և կառուցվածքի ինչպես տրված է գծագրերում: Շաղախի պորտլանդցեմենտը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 23464-79: Ավազը շաղախի համար քարե շարվածքում պետք է համապատասխանի ԳՈՍՏ 8736-93: Շաղախի պատրաստման համար օգտագործվող ջուրը չպետք է պարունակի տիղմ, օրգանական նյութեր, ալկալի, սուլֆատ և ուրիշ խառնուրդներ: Քարե շարվածքի շաղախը կազմված է մեկ մաս պորտլանդցեմենտից և երեք մաս չոր ավազից և բավարար քանակի ջրից, որը հարկավոր է պահանջվող խառնուրդը ստանալու համար: Շաղախը խառնելու համար օգտագործվող սարքավորումները և մեթոդները, պետք է որոշեն և հսկեն շաղախի մեջ մտնող յուրաքանչյուր կոմպոնենտի քանակությունը: Խառնիչի օգտագործման ժամանակ խառնման տևողությունը պետք է լինի ոչ պակաս 2 րոպեից: Խառնվում է շաղախի այնպիսի քանակություն, որը պետք է անմիջապես օգտագործելու համար: Շաղախը, որը ջուրը ավելացնելուց հետո չի օգտագործվում 30 րոպեի ընթացքում համարվում է անորակ: Կրկնակի խառնում չի թույլատրվում: Յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում խառնիչի թիակները պետք է մաքրվեն և լվացվեն:

- Շարվածքի մեջ օգտագործվող քարը մինչև շարվածքի մեջ տեղադրելը պետք է մաքրվի:
- Քարը չի տեղադրվում հորդառատ և երկարատև տեղացող անձրևի ժամանակ:
- Շաղախը, որը անձրևի տակ լուծվել է ենթակա է ամբողջությամբ հեռացման:
- Քարե շարվածքի վրա բեռնավորումը թույլ է տրվում միայն լիովին ամրանալուց հետո:
- Քարը, որը օգտագործվում է շարվածքի մեջ պետք է թրջվի 3-4 ժամ: Պետք է համոզված լինել, որ յուրաքանչյուր քար լիովին և հավասարաչափ թրջված է: Քարե շարվածքը տեղադրվում է լավ պատրաստված և ամուր հիմքի վրա:

Գծամշակման համար օգտագործվող շաղախը, եթե այլ նշումներ չկան, պետք է ունենա նույն կազմությունը, որը ունի շարվածքի շաղախը: Գծամշակման նախապատրաստական ընթացքում կարերը բաց մակերևույթի վրա պետք է ստեղծվեն

շաղախի մեջ: Կարի մակերևույթը մաքրվում է լարային խոզանակով և թրջվի: Գծամշակումը կատարվում է հետևյալ կերպ՝

- Ներքին գծամշակումը կատարվում է գծերի լցումով մոտավորապես 1սմ միջին խորությունից քարի երեսային կողմից
- Գծերի կտրումը կելկայով կայանում է գծերի լցման մեջ քարի երեսային կողմից
- Ռելիեֆային գծամշակումը - դա գծերի լցումն է 1-2սմ երեսային կողմի վրա:

Քերումից հետո կարերը պետք է սեղմվեն գծամշակվող գործիքով: Շատ երկար կարերը մշակվում է շաղախի մասամբ ամրանալուց հետո: Շաղախով լցված քարերը, որոնք չեն ենթարկվում մշակման հեռացվում են և տեղադրվւմ նորից թարմ շաղախով:

Քարե շարվածքը ներառյալ գծամշակումը պետք է հասունացվի ջրի ցանումով կամ ուրիշ մեթոդներով, որը թույլ կտա ինժեները:

Եթե հասունացումը կատարվում է ջրով, ապա քարե շարվածքը պետք է մնա խոնավ ոչ պակաս քան 4օր: Օգտագործվող ջրի որակը պետք է համապատասխանի մասնագրերի պահանջներին: Եթե քարե շարվածքի ավարտից հետո շարվածքը չի համապատասխանում գծագրերին Կապալառուն վերացնում է կամ փոխում է վնասված մասը իր հաշվին: Վճարման համար քարե շարվածքը չափվում է խորանարդ մետրով: Վճարման ենթակա քանակությունը որոշվում է գծագրերի գծերով կամ չափումներով:

Քարե շարվածքի վճարումը կատարվում է միավոր արժեքով խորանարդ մետրի համար, որը ներկայանում է քարե շարվածքի բոլոր ծախսերի լրիվ կոմպենսացում: Առանձին վճարում կատարվում է գծամշակման համար: Գծամշակման վճարումը կատարվում է միավոր արժեքով քառակուսի մետրի համար:

***<u>Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժում և աշխատանքների անվտանգության իրականացման կանոններ</u>***

Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է վերամբարձ կռունկով QTZ 125 10տն և 32տ բեռնատվություն ունեցեղ ավտոամբարձիչի օգնությամբ, որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս (առավելագույն 3տ բեռնունոկությամբ սլաքի շառավիղը 15մ մասնաշենքի) նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Կապալառուն աշխատանքների միավոր արժեքը որոշելու ժամանակ պետք է հաշվի առնի 1.5մ-ից ավել բարձրության վրա աշխատելու դեպքում հավաքովի–

քանդովի գույքային տախտակամածի տեղադրումը և տեղաշարժը, ասվալտապատ ճանապարհներով բնահողերի տեղափոխման ժամանակ ճանապարհների վերանորոգման և պահպանման աշխատանքները, ընդգրկի համապատասխան աշխատանքների միավոր արժեքի մեջ:

- Ամբարձիչի պտտվող հարթակը և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի մինիմալ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ:
- Մինիմալ հեռավորությունը ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միջև (между блоком стрелы и крюковой обоймой) պետք է լինի ոչ պակաս քան 0.5մ:
- Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է բարձրացված լինեն 0,5մ-ից բարձր ճանապարհին հանդիպող առարկաներից:
- Բաձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի տվյալ թռիչքի դեպքում:
- Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:
- Թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ:
- Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:
- Առասանման եղանակները պետք է բացառեն վեռնաշխատանքները (верхолазные работы) բեռը առասանից ազատելու համար:
- Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ, եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:
- Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլատվություն:
- Եթե ամբարձիչի սպասարկման գոնան լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի խցիկից, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:
- Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խափտումներ և այլն:
- Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 50:
- Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական

պայմանների պահանջներին:

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց նախազգուշացման համար պետք է ընդունվեն համապատասխան անհրաժեշտ միջոցառումները:

***<u>Շինարարության տևողություն</u>***

Պայմանագիր կնքելուց և ռեալ շինմոնտաժ աշխատանքների սեփական օրացուցային գրաֆիկ կազմելուց, տվյալ մշակումները կարող են ծառայել, որպես կողմորոշիչ տենդերի մասնակցի և Կապալառուի համար:

Շինարարության տևողությունը որոշվել է՝

- Ըստ օրացույցային գրաֆիկի հիման վրա
- Շինարարության տևողությունը կազմել է 36 ամիս:

Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- Նախապատրաստական շրջանի տևողությունը
- Նախագծվող օբյեկտի շինարարությունը
- Կոմպլեքսային փորձարկումներ և անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:

Առանձին աշխատանքների կատարման տեղափոխման այլ ժամկետը, որը կապված է կոնկրետ արդյունաբերական պայմանների հետ, տեխնոլոգիական ընդմիջումների անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է կազմի աշխատանքների կատարման գրաֆիկ, համաձայնեցնի և հաստատի պատվիրատուի հետ:

Շինարարության պայմանագրի կնքելու ժամանակ Կապալառուն պետք է՝

- Կազմակերպի շինարարության ապահովումը նյութատեխնիկական ռեսուրսներով, բավարար ծավալներով և այն ժամկետներում, որոնք կապահովվեն շինարարության տևողության պահպանումը, համաձայն պայմանագրի:

Հաշվի առնելով այն, որ դիրեկտիվ ժամկետը կազմում է 36 ամիս, որոշ աշխատանքների կատարման համար կիրառվել է բրիգադաների ավելացում, որը երևում է օրացույցային գրաֆիկում:

***Սեպտիկ Հոր***

Առաջարկվում է կազմակերպել ժամանակավոր սեպտիկ հորի 8.0խմ տարրողունակությամբ: Ավտոբետոնախառնիչ տակարի, ավտբոտոնամղիչի խողովակի լվացման համար համար: Կառուցել ե/բետոնե կլոր դիտահորերով 1500x1000մմ չափերի, խորություն 2.0մ /3 հատ / հոր: Միմիանց միացնել Փ150մմ պոլիվինիքլորիդային խողովակներով:

Ստորև ներկայացված են աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկը, շին. հրապարակի կազմակերպման հատակագիծը և հողային աշխատանքների հատակագիծը.

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ




ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

1. Շինարարության աշխատանքների սկիզբը ենթակա է ճշտման   եւնելով շինարարության մրցույթի հայտարարման ժամկետից:
2. Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ գործող ՀՀՇՆ 1-3.01.01-2008
3. Շինարարների ընդանուր քանակը շին.հրապարակում
   -147 մարդ այդ թվում բանվորները
   -7 մարդ ճարտարագիտա տեխնիկական անձնակազմ
   - 4 մարդ Հերթափոխի առավելագույն կազմ
   Ընդհանուր աշխատողների քանակի 70%-ից ոչ ավել այսինքն 103 մարդ
   Ընդհանուր ճարտարագիտա տեխնիկական անձնակազմ 80%-ից ոչ ավել այսինքն 6 մարդ
   Ընդհանուր աշխատողների քանակում չեն ընդգրկված մեքենավարները

| | | | Մաս | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|---|---|---|
| arch. HARON CHOLAKHYAN RCHitect | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | | ՇԿՆ | ԱՆ | 1 | 4 |
| | ք.Երևան Արաբկիր վարչական շրջան,Մալխասյանց փող. Հ. 6/3 Հողամաս և հ. 8 շինություն | | Կառուցապատող` «Մալխասյան 12» ՍՊ ընկերություն | | | |
| | ՆԳՃ | Ա. Չոլախյան | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | | | |
| | Նախագծեց | Ա. Չոլախյան | | | | |


ՇԻՆ.ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500


ԿՏՐՎԱԾՔ ըստ 1-1
ԿՏՐՎԱԾՔ ըստ 2-2
50 880
12 795


ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Անիվավոր էքսկավատոր CAT A28F
Անիվավոր էքսկավատորի աշխատանքի տիրույթը
Թրթուրավոր էքսկավատորի աշխատանքի տիրույթը
Թրթուրավոր էքսկավատոր հարվածային մուրճով
Մալխասյանց փողոց
Высота подъема, м
Глубина копания, м

Մանրամասները ներկայացված են շինարարության կազմակերպման նախագծում:

***Քանդման աշխատանքներ***

- Ներքին քանդման աշխատանքներ ժամանակ տեսակավորել բոլոր վերադարձվող նյութերը:
- Միաձույլ երկաթբետոն - B20 դասի բետոն քանդում իրականացնել թրթռամուրճով, մետաղական հիմնակմախք ազատե բետոնի, որից հետո մետաղական հիմնակմախքա կտրել:
- Քանդման աշխատանքները կատարող պետք է կազմակերպի շինարարական աղբի կանոնավոր տեղափոխման աշխատանքները և մինչև աղբի տեղափոխումը այն պահի, Կառուցապատվող օբյեկտում, իսկ շինարարական հրապարակի առկայության դեպքում՝ դրա համար շինարարական հրապարակում նախատեսված տարածքում՝ ծածկված անթափանց թաղանթներով կամ փակ տարաների (կոնտեյներներ, պարկեր և այլն) մեջ:
- Շինարարական աղբ տեղափոխել քաղաքապետարանի կողմից հատկացված տարածքում:
- Քանդման աշխատանքների ժամանակ հայտնաբերված հնությունները և պատերազմներից մնացած զինանյութեր, հայտնաբերվելու դեպքում դիմել, պետական համապատասխան մարմիններին ԱԻՆ:

***Քանդման աշխատանքների տևողություն***

Պայմանագիր կնքելուց և ռեալ շինմոնտաժ աշխատանքների սեփական օրացուցային գրաֆիկ կազմելուց, տվյալ մշակումները կարող են ծառայել, որպես կողմորոշիչ տեղեկությունների մասնակցի և Կապալառուի համար:

Շինարարության տևողությունը որոշվել է՝

- Ըստ օրացույցային գրաֆիկի հիման վրա
- Քանդման տևողությունը կազմել է 3 ամիս:

Քանդման նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- Նախապատրաստական շրջանի տևողությունը
- Շինության և խորդանոցների կոմունիկացիաների, ապամոնտաժում և հռսանքազրկում

Հաշվի առնելով այն, որ դիրեկտիվ ժամկետը կազմում է 3 ամիս, որոշ աշխատանքների կատարման համար կիրառվել է բրիգադաների ավելացում, որը երևում է օրացույցային գրաֆիկում:

Ստորև ներկայացված են աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկը և շին. հրապարակի կազմակերպման հատակագիծը.

Ավտոկռունկի աշխատանքային գծապատկեր
Կամ ԱЗ КС -557229 32т



Թրթուրավոր էքսկավատորի աշխատանքի տիրույթը



# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| № Ը/կ | Աշխատանքների անվանում | Աշխատանքի ծավալները: Չ/մ | Աշխատանքի ծավալները: Քանակ | Աշխատողների մեկ հերթում թվաքանակը | Պահանջվող մեքենաները մեխ-րը: անվանումը | Պահանջվող մեքենաները մեխ-րը: քանակը մեք.-մեխ. | Աշխատանքի տևողությունը օրերով | Հերթերի թիվը | Հերթափոխում աշխատողների թիվը | Բրիգադների քանակը | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ, ԱՄԻՍՆԵՐ I, II, III; I, II, III, IV) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | |
| 1 | Նախապատրաստական աշխատանքներ | օր | 3.0 | 3 | [illegible] | 1 | 3.0 | 1 | 3 | 1 | |
| 2 | Քանդման աշխատանք | | | | | | | | | | |
| 2.1 | Թիթեղե ներկված տանիքածածկի քանդում | քմ | 633.542 | 3 | [illegible] | 1/1 | 10.0 | 1 | 5 | 1 | |
| 2.2 | Կավարամածի, տախտակամածի և փայտե կրող կոնստրուկցիաների քանդում | խմ | 24.124 | 4 | [illegible] | 1/1 | 8.0 | 1 | 4 | 1 | |
| 2.3 | Փայտե դռների և պատուհանների ապամոնտաժում | քմ | 120.152 | 6 | [illegible] | 1 | 5.0 | 1 | 6 | 1 | |
| 2.4 | Հատակների ծածկույթների քանդում 1900.63 քմ | խմ | 95.00 | 3 | [illegible] | 1/1 | 8.0 | 1 | 3 | 1 | |
| 2.5 | Միջնորմների քանդում | խմ | 52.51 | 4 | [illegible] | 1/2 | 8.0 | 1 | 4 | 1 | |
| 2.6 | Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Փ50մմ և 100մմ | մ | 73.00 | 6 | | | 4.0 | 1 | 6 | 1 | |
| 2.7 | Ջեռուցման խողովակների սառ մոնտաժում Փ15-32մմ | մ | 236,00 | 2 | | | 4.0 | 1 | 2 | 1 | |
| 2.8 | Ջեռուցման սարքերի թուջե մա րտկոցների ապամոնտաժում | հատ | 36.0 | 3 | | | 4.0 | 1 | 3 | 1 | |
| 2.9 | Քարե շարվածքով պատերի քանդում | խմ | 763.93 | 3 | [illegible] | 1/2 | 16.0 | 1 | 3 | 1 | |
| 2.10 | Ե/բետոնե ծածկի սալերի քանդում | խմ | 475.155 | 4 | [illegible] | 1/2 | 16.0 | 1 | 4 | 1 | |
| 2.11 | Ե/բետոնե աստիճանների քանդում | խմ | 10.80 | 2 | [illegible] | 1/2 | 5.0 | 1 | 2 | 1 | |
| 2.12 | Բանկայի բետոնե հարթակի քանդում /2439.38քմ x 20սմ/ | խմ | 414.70 | 3 | [illegible] | 1/2 | 8 | 1 | 3 | 1 | |
| 2.13 | Բանկայի բետոնե հորի և ամփոփապատ ծածկույթի քանդում /25.70քմ x 20սմ/ | խմ | 5.14 | 3 | [illegible] | 1/2 | | 1 | 3 | 1 | |
| 2.14 | Բանկայի պնեւմատիկի ապամոնտաժում | հատ | 1.0 | 1 | [illegible] | 1/1 | | 1 | 1 | 1 | |
| 2.15 | Շինաղբի մաքրում, բարձում ա/ մեքենաների և տեղափոխում աղբավայր 15կմ /1817.235խմx1.80տ/ | տն | 3271.03 | 3 | [illegible] | 1/2 | 6.0 | 1 | 3 | 1 | |
| 2.16 | Չնախատեսված աշխատանքներ | օր | 68.0 | 2 | [illegible] | 1 | 68.0 | 1 | 2 | 1 | |

1. Շինարարության աշխատանքների սկիզբը ենթակա է ճշտման ելնելով շինարարության մրցույթի հայտարարման ժամկետից:
2. Շինարարության տևողությունը հաշվարկված է ըստ գործող ՀՀՇՆ 1-3.01.01-2008
3. Շինարարների ընդհանուր քանակը շինհրապարակում -55 մարդ
   այդ թվում բանվորները -30 մարդ
   ճարտարագիտա տեխնիկական անձնակազմ - 2 մարդ
   Հերթափոխի առավելագույն կազմ
   ընդհանուր աշխատողների քանակի 70%-ից ոչ ավել այսինքն 38 մարդ
   ընդհանուր ճարտարագիտա տեխնիկական անձնակազմ 80%-ից ոչ ավել այսինքն 1 մարդ
   ընդհանուր աշխատողների քանակում չեն ընդգրկված մեքենավարները

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ARCH. AHARON CHOLAKHYAN ARCHitect, ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՉՈԼԱԽՅԱՆ ԱՁ | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ք.Երևան Արաբկիր վարչական շրջան,Մալխասյանց փող. 2. 6/3 հողամաս և հ.8 շինություն | Մաս | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | ՔԿՆ | ԱՆ | 1 | 2 |
| | ՆԳՏ: Ա. Չոլախյան | Պատվիրատու «Մալխասյանց 12» ՍՊԸ ընկերություն | | | |
| | Նախագծեց: Ա. Չոլախյան | ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | | | |


ՇԻՆ.ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ծանոթագրություն
Ստացիոնար Զոդման Շինարարության Վերաբերյալ
Քանդվող շինությունների արտաքին տեսքը
ГОСТ 12.4.059-89

Մանրամասները ներկայացված են քանդման աշխատանքների կազմակերպման նախագծում:

*Ջեռուցում և օդափոխում*

Շենքում նախատեսվել է տանիքում տեղադրել տաքացնող-սառեցնող մոդուլային կասկադ համակարգով հավաքվող չիլլերներ յուրաքանչյուրը 150կվտ սառնարտադրողության 5հատ: Ջեռուցման համար օդի ջերմաստիճանը տարվա ցուրտ ժամանակահատվածի համար ընդունված է -19՛C, իսկ ամառային ռեժիմում՝ +36՛C: Մատակարարող և հետադարձ խողովակները անցնում են տանիքով: Ջերմային հզորությունը թեթևացնելու համար ջերմատարը բաժանվում է երկու թևի և երկուական կանգնակներով իջնում ջեռուցվող հարկեր: Որպես ջեռուցման-հովացման սարքեր ընտրված են օդամղիչ կոնվեկտորներ, որոնք տեղադրված են յուրաքանչյուր բնակարանի մուտքի մոտ առաստաղի տակ: Ջերմության ընդհանուր ծախսը կազմում է 375կվտ, իսկ հովացմանը ՝ 750կվտ:

Օդափոխություն՝ Սան. հանգույցների օդափոխության համար յուրաքանչյուր սան.հանգույցում նախատեսվել է լույսի հետ աշխատող առաստաղային առանցքային օդամուղ: Խոհանոցներից օդի արտածումը մնական է: Բոլոր օդատարները հորանների մեջ բարձրացվում են 4.5մ: Յուրաքանչյուր արտածման հորանի վրա նախատեսվել է դեֆլեկտոր: Նախատեսվել է օդափոխության համակարգ -3.30 հարկում տեղակայված ավտոկայանի համար Ն.Հ-1, Ա.Հ-1:

Ծխահեռացում՝ Շենքում նախատեսվել է նաև հակահրդեհային պաշտպանություն մնակելի հարկերի համար: Ծ.Հ-1, 2 համակարգների միջոցով կատարվում է ծխահեռացում միջանցքներից, իսկ Դ.Հ-1, 2, 3, 4 համակարգների միջոցով օդի կոմպենսացիա միջանցքներին և վերելակների հորաններին: Նախատեսված է նաև ծխահեռացում և օդի կոմպենսացիա ավտոկանգայանատեղին՝ Դ, Հ-5:

Նախագծված բնակելի շենքի ջեռուցման, օդափոխության և օդի լավորակման համար շենքի տանիքում նախատեսվում է տեղադրել մոդուլային կասկադ համակարգով հավաքվող 5 հատ (յուրաքանչյուրը 150կՎտ) TCA տիպի տաքացնող-սառեցնող չիլլերներ, սառնարտադրողության սառնագենտի տեսակը՝ R 410A:

*Պատկեր 9: Իրադրային հատակագծեր*







*Պատկեր 10: Գլխավոր հատակագիծ*




Պատկեր 11: Ուղղձիգ նշահարման հատակագիծ



*<u>Ծրագրի տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլ մանրամասները ներակայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժիններում:</u>*

## 7. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի այլընտրանքային տարբերակները դիտարկվում են երկու առումով:

### 7.1. «Ոչ մի գործողություն» այլընտրանքային տարբերակ

«Ոչ մի գործողություն» այլընտրանքը վերաբերում է այն սցենարին, երբ բազմաբնակարան շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցումը չի իրականացվում: Այս սցենարի դեպքում՝

- Տարածքում կշարունակեն պահպանվել առկա կառուցապատումները և չօգտագործվող հողամասերը՝ առանց նպատակային և արդյունավետ կիրառման:
- Բնակչության աճող պահանջարկը ժամանակակից և էներգաարդյունավետ բնակարանների նկատմամբ կմնա չբավարարած:
- Տարածքում առկա կայանման խնդիրները չեն լուծվի, ինչը կպահպանի երթևեկության ծանրաբեռնվածության և հարակից փողոցների անհարմարությունների ներկայիս մակարդակը:
- Չիրացված կմնան տարածքի քաղաքաշինական բարելավման և ենթակառուցվածքների արդիականացման հնարավորությունները:
- Կկորսվի նոր աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման ներուժը:

Ուստի, «ոչ մի գործողություն» տարբերակը չի դիտարկվում որպես կենսունակ և կայուն այլընտրանք, քանի որ այն հակասում է ինչպես Երևանի քաղաքաշինական զարգացման ծրագրերին, այնպես էլ բնակչության կարիքներին:

### 7.2. Ծրագրի առավելությունները

Առաջարկվող տարբերակը ենթադրում է բազմաբնակարան բնակելի շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի կառուցում, որն ունի մի շարք առավելություններ՝ ինչպես լոկալ, այնպես էլ ամբողջ քաղաքային միջավայրի համար: Մասնավորապես՝

- **Բնակարանային ֆոնդի արդիականացում**՝ կավելանան ժամանակակից չափանիշներին համապատասխանող բնակարանները՝ ապահովելով բնակչության համար հարմարավետ և անվտանգ կեցության պայմաններ:
- **Ենթակառուցվածքային խնդիրների լուծում**՝ նախատեսվող ավտոհանգրվանային մասնաշենքը կնպաստի կայանման տեղերի

խնդիրների կարգավորմանը և երթևեկության հոսքերի բարելավմանը:

- **Քաղաքաշինական միջավայրի զարգացում**՝ շենքի և հարակից տարածքի բարեկարգումը կբարձրացնի շրջակա միջավայրի որակը և կզարգացնի Արաբկիր վարչական շրջանի քաղաքաշինական ներդաշնակությունը:
- **Սոցիալ-տնտեսական զարգացում**՝ շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչը կնպաստի տեղական տնտեսական ակտիվությանը:
- **Բնակչության կյանքի որակի բարձրացում**՝ նախագծի իրականացման արդյունքում բնակիչները կապահովվեն հարմարավետ բնակարաններով, բարեկարգ տարածքով և անվտանգ միջավայրով:

Բացի այդ, ծրագրի իրականացման ընթացքում կիրականացվեն շրջակա միջավայրի նկատմամբ զգայուն միջոցառումներ՝ ուղղված աղմուկի, փոշու, շինարարական թափոնների կառավարման և հարակից բնակչության կյանքի որակի պահպանմանը: Շինարարական աշխատանքներում հնարավորինս կներառվի տեղական աշխատուժ՝ համայնքի ներգրավվածությունն ու տնտեսական օգուտները առավելագույնի հասցնելու նպատակով:

# 8. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

**8.1. Ջուր.**

Տեղում առկա են բոլոր ենթակառուցվածքները, այդ թվում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ջրագիծը և կոյուղատարը: Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը, «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կկնքի պայմանագիր: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանը ներկայացված է սույն հաշվետվության Հավելված 5-ում:

*Ջրի ծախսը խմելու և տնտեսական կարիքների համար*

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն СНиП 2.04.01-25 ”Внутренний водопровод и канализация зданий'', նորմերի:

Մեկ բանվորի ջրօգտագործման նորմը՝ - 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16 լիտր

Շինարարական աշխատանքային ռեժիմը – առավելագույնը 36 ամիս, 22 օր/ամիս, օրը 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է.

$$W_{\text{խ.տ.}} = n \times N \times T_1 + n_1 \times N_1 \times T_2,$$ որտեղ

**n –** Ինժեներատեխնիկական /ԻՏ/ աշխատողների թվաքանակն է՝ 20 մարդ

**N–** ԻՏ աշխատողների ջրածախսի նորմատիվն է, 0.016 մ³օր/մարդ

$T_1$ – ԻՏ աշխատողների աշխատանքային օրերի ընդհանուր թիվը- 792,

**$n_1$**–բանվորների թվաքանակն է (օրական)- 127 մարդ,

**$N_1$** - բանվորների ջրածախսի նորմատիվն է - 0.025 մ³օր/մարդ,

$T_2$ - աշխատանքային օրերի թիվն է - 792.

**Wխ.տ. = 20 x 0.016 մ³ x 792 + 127 x 0.025 մ³ x 792 = 8237 մ³/շին, 3.5 մ³/օր:**

*Ջրի ծախսը տրանսպորտային միջոցների անիվների լվացման համար*

Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է մեկ կամ երկու մեքենա: Տեղադրվելու են 2 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 120 լ/հատ:

**$Q_2$ = 120 x 2 x 2 = 480 լ կամ 0.48 մ³/օր**

**Շին.ընթացքում՝ 0.48 մ³/օր x 792 օր = 380 մ³/շին**

*Ջրի ծախսը փոշեառաջացման օջախների ջրցանի համար*

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

**$V_1$ = S x K x T,**

Որտեղ՝ S – շինհրապարակի թրջվող մակերեսն է, 2500 մ²,

K - ջրցանման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 170 օր/տարի կամ 510 օր/շին:

Այսպիսով՝

**$V_1$ = 2500 x 0.0015 x 510 = 1912.5 մ³/շին:**

Միջին օրեկանը կազմում է 3.75մ³:

Ջրցանը իրականացվելու է ջրցան մեքենայի միջոցով, իսկ հնարավորության դեպքում կտեղադրվեն ջրշաղ սարքեր:

Ընդամենը շինարարության ընթացքում ջրապահանջը կկազմի՝

**8237 + 380 + 1912.5 = 10529.5** մ³/շին:

Արտահոսք.

Ջրցանը արդյունքում արտահոսք չի առաջանում

Անիվների լվացման ընթ ացքում ջրի կորուստը կազմում 10 տոկոս, այստեղից արտահոսքը կկազմի՝ 380 x (1 – 0.1) = 342 մ³/շին:

Կենցաղային ջրօգտագործման կորուստները կազմում են 5 տոկոս, այստեղից՝ 8237 x (1 – 0.05) = 7825 մ³/շին:

Ընդամենը արտահոսքը կկազմի՝ 342 + 7825 = 8167 մ³/շին:

Տարածքի բոլոր կեղտաջրերը հավաքվում են մեկ ցանցի մեջ և միանում Վեոլիա ջուր ՓԲԸ կոյուղատարին:

**8.2. Հողային աշխատանքներ**

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հողային աշխատանքներ, ինչի արդյուքնում հանվող գրունտի և հողի քանակը կկազմի 4244.343 մ$^3$: Հանված նյութերը կդասակարգվեն և կպահվեն տարածքում նախատեսված համապատասխան վայրերում, իսկ ոչ պիտանի հանույթը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված աղբավայր՝ համապատասխան երթուղինրեով:

**8.3. Օգտագործվող նյութեր**

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են հետևյալ նյութերը.

- մալուխ,
- մետաղ՝ ալյումին, պողպատ,
- ներկ,
- մեկուսիչ նյութեր
- բետոն,
- խիճ,
- փայտանյութ:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

# 9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

## 9.1. Շինարարական փուլի ազդեցությունը և մեղմող միջոցառումները

### 9.1.1. Օդային ավազան.

Բազմաբնակարան շենքի և ավտոհանգրվանային մասնաշենքի շինարարության ընթացքում կառաջանան մի շարք նյութերի արտանետումներ: Հիմնական արտանետումը՝ փոշին, կառաջանա հողի փորման, բեռնման և տեղափոխման ընթացքում: Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ կառաջանան նաև դիզվառելիքի այրման արգասիքներ՝ ազոտի, ծծմբի և ածխածնի օքսիդներ, պինդ մասնիկներ:

*Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները*

*ա)* Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ “ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ”, Минпромстрой СССР, 1987:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6)/3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

$P_1$ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

$P_2$ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

$P_3$ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

$P_4$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6 (հաշվի առնելով նաև ջրցանը)

$P_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

$P_6$ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող գրունտի և հողի քանակը՝ 4244.343 մ³ ամբողջ շինարակության ընթացքում, կամ 6791տ:

G = 6791 տ : 792 ժամ = 8.57 տ/ժամ:

$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.6 \times 0.4 \times 8.57 \times 10^6 \times 0.5 \times 1.0)/3600 = 0.286$ գ /վրկ:

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

0.286 գ/վրկ x 792 օր x 8 ժամ x 3 600վրկ/ժամ : 1 000 000 գ/տ = 6.52 տ:

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացում:

բ) Քանդման աշխատանքներ

Քանդման աշխատանքների տևողությունը կկազմի 3 ամիս՝ 66 օր, 528 ժամ:

Քանդման ծավալները՝ 1811 մ³:

Հաշվարկը կատարվում է նախորդ կետում բերված բանաձևով:

$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6)/3600$ տ/ժամ (բանաձև 1), որտեղ

$P_1$ - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

$P_2$ – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

$P_3$ - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.0

$P_4$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.4 (հաշվի առնելով նաև ջրցանը)

$P_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

$P_6$ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G – հանվող գրունտի և հողի քանակը՝ 1181 մ$^3$ ամբողջ շինարակության ընթացքում, կամ 2362 տ:

G = 2362 տ : 528 օր : 8 ժամ/օր = 0.56 տ/ժամ:

$Q_1$ = (0.05 x 0.02 x 1.0 x 0.4 x 0.4 x 0.56 x 10$^6$ x 0.5 x 1.0)/3 600= 0.012 գ /վրկ:

Արտանետումների քանակը շինարարական աշխատանքների արդյունքում կկազմի՝

0.012 գ/վրկ x 66 օր x 8 ժամ x 3 600վրկ/ժամ : 1 000 000 գ/տ = 0.023 տ:

Վնասակար նյութերի արտանետումներ են սպասվում նաև շինարարական և տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, վառելիքի այրման ընթացում:

*Վառելանյութի օգտագործումը*

Վառելանյութը կարող է օգտագործվել մեքենաների և բեռնատարների շահագործման, ըստ շինարարական գործունեության պահանջի: Հիմնականում օգտագործվելու է դիզելային վառելիք:

Մեքենաների և բեռնատարների վառելիքի ծախսը կարող է տարբերվել, կախված մեքենայի տեսակից, տատանվելով 60 - 70 լ/օր սահմաններում, ամբողջ շինարարության ընթացքում վառելիքի հաշվարկային ծախսը կկազմի 51480 լ կամ 43.8 տ:

Վառելանյութի պահպանման համար պետք է հատկացվի հատուկ տարածք: Տարածքը պետք է ունենա բետոնե հարթակ և արտահոսքերի հավաքման համակարգ:

*բ) Դիզելային վառելիքի այրման արգասիքները*

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգի հիման վրա (սույն մեթոդական համակարգը հիմնված է ԵՄ CORINEIR գործակիցների հիման վրա):

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 15-ում:

*Աղյուսակ 15: Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)*

| Վառելիքի տեսակը | Նյութի անվանումը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | $NO_x$ | CH | ԾՕՄ | CO | $N_2O$ | $CO_2$ | ՊՄ |
| Դիզելային վառելիք | 42.3 | 0.243 | 8.16 | 36.4 | 0.122 | 3138 | 4.3 |

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի

արտանետումները բերված են աղյուսակ 16-ում, որում միավորվել են ածխաջրածինները, ազոտի օքսիդները:

*Աղյուսակ 16: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը*

| Ավտոմեքենայի կատեգորիան | Վնասակար նյութը | Տեսակարար արտանե-տումները, գ/կգ | Արտանետումները, տ/շին.ժամ |
|---|---|---|---|
| Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ | CO | 36.4 | 1.59 |
| | Ածխաջրածիններ | 8.403 | 0.37 |
| | $NO_x$ | 42.422 | 1.86 |
| | Մուր | 4.3 | 0.19 |

### *Ծծմբային անհիդրիդ*

Ծծմբային անհիդրիդի (SO2) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է $SO^2$-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$ESO_2 = 2\Sigma k_s b$, որտեղ՝

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 43.8 տ/շին.ժամանակ:

$SO_2 = 2 \times 43.8 \times 0.002 = 0.17$ տ:

Ընդամենը շինարարական փուլում առաջացող արտանետումների քանակները բերված են աղյուսակ 17-ում:

*Աղյուսակ 17: Շինարարության փուլի արտանետումները*

| N | Արտանետվող նյութի անվանումը | Արտանետումը, տ/շին.ժամ |
|---|---|---|
| 1 | Անօրգանական փոշի | 6.543 |
| 2 | Ածխածնի օքսիդ | 1.59 |
| 3 | Ածխաջրածաններ | 0.37 |
| 4 | Ազոտի երկօքսիդ | 1.86 |
| 5 | Մուր | 0.19 |
| 6 | Ծծմբային անհիդրիդ | 0.17 |

Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը, օդի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես ցածր: Ազդեցությունը ավելի նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի և հանվող գրունտի ջրցան, շինարարական տեխնիկան և ավտոմեքենաները պարբերաբար կստուգվեն և շարժիչները կկարգաբերվեն:

Բացի փոշու մոնիթորինգից անհրաժեշտ է լինելու նաև իրականցնել փոշեկլանիչ ցանցապատում / թաղանթապատում մինչև 4մ բարձրությամբ հատկապես տարածքի

այն մասում, որտեղ անմիջական հարևանությամբ առկա են շենք-շինություններ՝ օգտոտգործվող հասարակական նպատակներով («Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան): Անհրաժեշտության դեպքում փոշեկլանիչ ցանցապատման / թաղանթապատման բարձրությունը կարող է փոփոխվել՝ ըստ պահանջի: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

Ի լրումն վերոնշյալի, ստորև ներկայացված են ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով սահմնաված այն պահանջները, որոնք պետք է պահպանվեն շինարարական աշխատանքների ընթացքում: Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցվող (վերակառուցվող, քանդվող) օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների՝ շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով շինարարություն, ինչպես նաև փոշու արտանետման հետ կապված աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները և քաղաքացիները դրանք իրականացնելու ընթացքում պարտավոր են՝

ա) պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

բ) շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ,

գ) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, սորուն նյութերը և շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,

դ) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,

ե) հղկման աշխատանքներ իրականացնելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

զ) սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

է) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

Արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության

հատուկ պահպանվող տարածքների հողերում:

Արգելվում է կենցաղային և արտադրական աղբը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում:

**9.1.2. Ջրային ավազան**

Մինչև շինարարության սկիզբը կվերականգնվի մաիցումը Վեոլիա ջուր ջրատարին և կոյուղու համակարգին և կեղտաջրերը կլցվեն կոյուղու ցանց: Շինարարության փուլում ջրի ջրառը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի, իսկ կանաչապատ տարածքների ոռոգումը՝ Երևան ՋՈՒ-ի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա:

Այլ ազդեցություններ ջրային ռեսուրսների վրա շինարարության ընթացքում չի նախատեսվում:

**9.1.3. Թափոնների կառավարում**

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, տարածքում առաջացող երեք տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), ծածակագիրը՝ 9120040001004/՝ 179.2 մ³, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

«Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ» /ծածակագիրը՝ 9120060101004/՝ 0.023 մ³, ըստ առաջացման կտեղափոխվի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

«Հողային հանվածքներ», ծածկագիրը՝ 3140110101005, ընդհանուր ծավալը՝ 4244.343 մ³, որից 4090.05 մ³, կտեղափոխվի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների

առաջացումը։

Քանի որ, շինարարական տեխնիկան և ավտոտրանսպորտը կսպասարկվեն ավտոսպասարկման կայաններում, այլ թափոնատեսակներ տարածքում չեն առաջանա։

### 9.1.4. Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության ընթացքում հանվելու է 4244.374 մ$^3$ հողային զանգված, որից 154.293 մ$^3$ մասը՝ ավազի հետ միասին, կօգտագործվի որպես ետլիցք, 4090.05 մ$^3$, ըստ որոշակի ծավալների առաջացման, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր։

### 9.1.5. Կենսաբազմազանություն

Ազդեցությունը իրականում չնչին է լինելու, քանի որ տարածքը փոքր է որպեսզի զգալի ազդեցություն լինի տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա։ Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը ևս չնչին է լինելու քանզի տարածքում չկան վայրի բուսատեսակներ

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարական աշխատանքների ընթացքում բացասական ազդեցության կենսաբազմազանության վրա չի նախատեսվում, քանի որ տարածքը երկար ժամանակ ենթարկվել է մարդածին ազդեցության և այնտեղ կենսաբազմազանությունը գործնականում բացակայում է։ Տեղամասի առկա վնասված և չորացած ծառերը կհատվեն և Ծրագրի իրականացման շրջանակներում կիրականացվի կանաչապատում, ինչը դիտարկվում է նշված և հարակից տարածքների համար որպես դրական ազդեցություն։

Ըստ հետազոտությունների, ներկայացված գործունեության իրականացման համար նախատեսված տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ։ Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ներկայացվող տարածքը երկար տարիներ ենթարկվել է մարդածին ազդեցության։

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ։

### 9.1.6. Պատմամշակութային հուշարձաններ

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես

ղաղարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Ներկայացված գործունեությունը չի կարող որևէ բացասական ազդեցություն ունենալ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտի վրա, քանի որ տարածքում և դրա հարևանությամբ նմանատիպ օբյեկտներ չկան:

### 9.1.7. Էկոլոգիապես զգայուն տարածքներ

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային պարկի, զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի, թե՛ շինարարության և թե՛ շահագործման փուլում որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

### 9.1.8. Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված.

- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Ազդեցության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը և նախատեսված մեղմացնող միջոցառումները, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր: Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

### 9.1.9. Աղմուկ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը հիմնականում ցածր է, սակայն քանի որ տեղանքը գտնվում է բնակելի մարդաշատ տեղամասում և ճանապարհի հարևանությամբ, այդ հատվածում աղմուկի մակարդակը գնահատվում է որպես միջին-բարձր (հիմնականում՝ ավտոտրանսպորտային միջոցներ):

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն):

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A):

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների բնույթը, աշխատակիցների և բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքին մոտ կան մի քանի բնակելի և հասարակական շենք-շինություններ, որոնց վրա բացասական ազդեցությունները կանխելու նպատակով պետք է իրականացվեն աղմուկի նվազեցմանն ուղղված մեղմացնող միջոցառումներ: Մանրամասները ներկայացված են ԲԿՊ-ում:

### 9.1.10. Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական

ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

*Սոցիալական միջոցառումներ*

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է `

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

**9.1.11. Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար՝ ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժօգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:
- Անձնակազմը պետք է ապահովվի համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ

ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)

- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան հանգստացողների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

### 9.1.12. Հակահրդեհային միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում կարևորվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 9.1.13. Սանիտարահիգենիկ և սանիտարահամաճարակային նորմեր

Գործունեության իրականցման շրջանակներում պարտադիր է պահպանել ՀՀ

օրենսդրությամբ սահմանված, բայց դրանով չսահմանափակված բոլոր նորմերը՝ սանիտարահիգենիկ բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Այդ պահանջը բավարարելու համար անհրաժեշտ է՝

- պետական մարմիններից ստանալ տեղեկություններ սանիտարահամաճարակային իրադրության շրջակա միջավայրի, բնակչության առողջական վիճակի և սանիտարական կանոնների մասին,
- մասնակցել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վերաբերյալ պետական մարմինների որոշումների և ծրագրերի մշակմանը, քննարկմանն ու ընդունմանը,
- կատարել Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները և արտադրական վերահսկողություն իրականացնել դրա նկատմամբ
- ըստ անհրաժեշտության մշակել ու իրականացնել սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտման վերացման և կանխման, բնակչության աշխատանքի, կենցաղի, կրթության և հանգստի պայմանների բարելավման, ինչպես նաև հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելման ուղղությամբ,
- տեղեկացնել Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանը, ինչպես նաև տեղական իշխանություններին վթարային իրավիճակների, արտադրության տեխնոլոգիական այն պրոցեսների մասին, որոնք կարող են հանգեցնել կամ հանգեցրել են սանիտարական կանոնների խախտման,
- կատարել սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վերաբերյալ պետական իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց որոշումները և կարգադրությունները,
- կազմակերպել իրենց աշխատողների սանիտարական կուլտուրայի բարձրացմանը նպաստող հիգիենիկ ուսուցում և դաստիարակություն:

#### 9.1.14. Բարեկարգում և կանաչապատում

Գործունեության իրականացման ընթացքում ծառերի հատում չի նախատեսվում:

Գործունեության իրականացման շրջանակներում նախատսվում է իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, որի արդյուքնում ներկայացվող տարածքի մոտ 52 տոկոսը պատված կլինի թարմ ծառաթփային բուսականությամբ: Մանրամասները ներկայացված են աշխատանքային նախագծում:

### 9.2. Սոցիալական ծրագիր

Շինարարության փուլում գործունեության իրականացումն նաև ունենալու է

համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ մասնավորապես, բացվելու են նոր աշխատատեղեր և առաջնահերթություն է տրվելու թե՛ շինարարության և թե՛ սպասարկման ընթացքում ներգրավել մասնագիտական և ոչ մասնագիտական աշխատուժ հարակից համայնքներից/բնակավայրերից:

## 10. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել է իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): ԲԿՊ-ն ներկայացված է Հավելված 1-ում:

## 11. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին փուլի հանրային լսումը կազմակերպվել և իրականացվել է 2025թ-ի օգոստոսի 22-ին ժամը 11:00-ին՝ ՀՀ կառավարության 19.11.2014թ-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ ք. Երևան, Ն. Զարյան փ. 27):

Հանրային քննարկումների մասին պատշաճ կերպով ծանուցվել է հանրությունը (հանրային ծանուցծման և քննարկումների մասին հայտարարությունը հրապարակվել է օրաթերթում) և համայնքին (պաշտոնապես՝ էլ-փոստի գրությամբ):

Հանրային ծանուցման և քննարկումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և համայնքի կողմից տրամադրվել է գործունեության վերաբերյալ նախնական համաձայնության մասին համայնքի ավագանու որոշումը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ. ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| Հնարավոր բացասական ազդեցություն | Մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու կազմակերպություն | Մեղմացնող միջոցառումների ժամանակը | Վերահսկող կազմակեր-պություն/պատասխանատու | Մեղմացնող միջոցառումների ծախսերը |
|---|---|---|---|---|---|
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | | |
| **Օդային ավազան** | - պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով<br>- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ<br>- պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար.<br>- խուսափել շարժիչների անգործությունից.<br>- միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները.<br>- կատարվել գրունտի խոնավեցում, ճանապարհի ջրցան՝ ըստ անհրաժեշտության.<br>- ջրցանը կատարել ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին<br>- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ | Կապալառու | Շին.աշխատան քների ժամանակ ըստ անհրաժեշտութ յան և կիրառելիության | «Մալխասյանց 12» ՍՊԸ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով<br>- Արգելել այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում<br>- Արգելել կենցաղային և արտադրական աղբի այրումը, ինչպես նաև տերևաթափից առաջացած թափոններն այրել բնական միջավայրում, բնակավայրերում, նրանց շրջակայքում ու դրանց այրման համար չնախատեսված կաթսայատներում, վառարաններում և այլ սարքերում | | | | |
| **Ջրային ռեսուրսներ** | - գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար մատակարարել խմելու որակի ջուր՝ բերովի (շշերով),<br>- հրդեհաշիջման նպատակով տեղադրել ջրի բաքեր<br>- շինհրապարակում տեղադրել 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,<br>- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով,<br>- ջրցանն իրականացնել տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության<br>- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած | Կապալառու | Շին.աշխատանքներ ի ժամանակ՝ ըստ պահանջարկի | «Մալխասյանց 12» ՍՊԸ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | արտադրական հոսքաջրերը ուղղորդել տարածքում տեղադրված բիոզուգարան<br>- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում<br>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի:<br>**Կեղտաջրեր**<br>- Մինչև շինարարության սկիզբը իրականացնել միացումը քաղաքային կոյուղու համակարգին: | | | | |
| **Հողային ռեսուրսներ** | - գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր նախատեսել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վտանգավոր նյութերի պահեստավորումը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,<br>-շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա,<br>-ավելցուկային գրունտ չի առաջանա,<br>- հանված հողային զանգվածը օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար | Կապալառու | Աշխատանքները սկսելուն պես հողային աշխա-տանքների ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | ընթացիկ ծախսեր |
| **Ազդեցություն կենսաբազմազանության վրա** | - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները | Կապալառու | Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխա-տանքների ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | - պահպանության միջոցառումներն իրականացնել 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջներին համապատասխան<br>- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին: | | | | |
| **Թափոնների առաջացում և կառավարում** | - շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել անմիջապես հողային աշխատանքների տեղամասում և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ըստ կուտակման տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր<br>- կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում աղբավայրերում՝ վարչական շրջանի ղեկավարի հետ համաձայնեցված<br>- արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօդյա այրումը<br>- շինանյութերը ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից | Կապալառու | Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | ընթացիկ ծախսեր |
| **Աղմուկ և թրթռում** | Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.<br>- աղմկոտ աշխատանքներն իրականացնել ցերեկվա ժամերին,<br>- մեքենաների շարժիչները պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել | Կապալառու | Շին. աշխատանքների մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | ընթացիկ ծախսեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Պատմամշակութային գտածոների հայտնաբերում** | - գտածոներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել համապատասխան մարմիններին | Կապալառու | - | «Մալխասյանց 12» ՍՊԸ | - |
| **Առողջական խնդիրներ, պատահարներ շինարարական հրապարակում** | - աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները.<br>- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահոված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,<br>- ապահովել, որ բանվորները անվտանգության վերապատրաստում անցնեն<br>- ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,<br>- ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,<br>- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,<br>- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,<br>- Վերապատրաստել էլեկտրական աշխատանքներ իրականացնող անձնաազմը<br>- Աշխատողների ցանիտարահիգենիկ և սանիտարակենցաղային պայմանները (լվացարան, հանդերձարան, ճաշարան) ապահովված են լինելռի շին. հրապարակի տարածքում | Կապալառու | - | «Մալխասյանց 12» ՍՊԸ | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Արտակարգ իրավիճակներ** | Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.<br>- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովվել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով,<br>- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,<br>- շինարարակիան նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: | Կապալառու | Գործունեության ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | - |
| **Սոցիալական** | Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր | Կապալառու | Գործունեության ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | - |
| **Բարեկարգում և կանաչապատում** | շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս պատշաճ տեսքի:<br>-շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,<br>-կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:<br>- տարածքի կանաչապատումը իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան և ապահովել ոռոգման համակարգ | Կապալառու | Գործունեության ընթացքում | «Մալխասյանց 12» ՍՊԸ | |
| ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Օդային ավազան** | Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում: | - | - | - | - |
| **Ջրային ռեսուրսներ** | Շահագործման փուլում հասանելի կլինի աշխատող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ: | - | - | - | - |
| **Թափոնների կառավարում** | -բնակելի շենքի շահագործման ընթացքում թափոնների կառավարումը վերահսկելու են համատիրությունը և վարչական շրջանը: | - | - | - | - |
| **Արտակարգ Իրավիճակներ** | -կառույցները ապահովված են լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, ազդանշանային համակարգերով<br>- տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառել միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարհանմանը:<br>- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարհանումը: | - | - | - | - |
| **Աղմուկ և թրթռում** | Շահագործման փուլում աղմուկի մակարդակի զգալի փոփոխություն չի նախատեսվում: | - | - | - | - |
| **Բարեկարգում և կանաչապատում** | -բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,<br>-հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ | - | - | - | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,<br>-գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը, | | | | |

| Մշտադիտարկման միջոցառումներ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *Որ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի* | *Ինչու պետք է այդ պարամետրը մոնիթորինգի ենթարկվի* | *Որտեղ պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի* | *Երբ կամ ինչ հաճախականու-թյամբ պարամետրը պետք է մոնիթորինգի ենթարկվի* | *Ինչպես պետք է պարամետրը մոնիթորինգի ենթարկվի* | *Մոնիթո-րինգի արժեքը* | *Ով է պատասխանատու մոնիթորինգի համար* |
| **Պատմական և մշակութային արժեքներ** | Պատմական և մշակութային հուշարձաններին վնաս հասցնելուց խուսափելու համար | Գործունեության տարածք | Նախքան շինարարական աշխատանքները | Գրառումների ուսումնասիրում | Ներառված է նախագծման գնի մեջ | ԿԿ, ԻԳ, Խորհրդատու, |
| **Շինարարական նյութերի որակը** | Հավաստիանալ շինարական նյութերի հուսալիության և մարդկանց առողջության համար դրանց անվտանգ լինելու մեջ | Մատակարարի գրասենյակում կամ պահեստում | Մատակարարման պայմանագրի ուսումնասիրման ընթացքում | Փաստաթղթերի ստուգում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում** | - Սահմանափակել արտանետումներից հողի և օդի աղտոտումը,<br>- Սահմանափակել վիբրացիայի և աղմուկի հետևանքով հանրությանը հասցվող անհանգստությունը,<br>- Նվազենել երթևեկության խափանումը<br>Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը<br>Խուսափել շինհրապարակում աղբի և շինարարական նյութերի մնացորդների հետևանքով հնարավոր պատահարներից<br>Շինհրապարակում և դրա շրջակայքում էսթետիկական տեսքի պահպանման համար | -Շինհրապարակ<br>- Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհները | Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին եւ դրանից դուրս | Շարժման ուղղությամբ շինարարական օբյեկտի հարևան ճանապարհների զննում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| **Շինտեխնիկայի տեղաշարժ** | - Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում յուղերով հողի և ջրի աղտոտումից | Շինարարական ճամբար և ժամանակավոր հրապարակներ | Սարքավորումների շահագործման ընթացքում | Գործունեության ստուգում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Հողի էրոզիա** | Էրոզիայի երևույթները կանխելու նպատկով | Ջրային հոսքորի ափամերձ տարածքներ և նյութերի պահեստավորման տեղամաս | Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում | Էրոզիայի կանխման միջոցառումների և դրանց արդյունավետության ուսումնասիրություն | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| **Հողի աղտոտում** | Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրապարակ-ներում, ներառյալ շինճամբարը, մոտեցման ճանապարհները, | Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսում-նասիրություն | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| | Հողի աղտոտումը նվազեցնելու նպատակով | Ավտոկայանա-տեղեր, մոտեցման ճանապարհներ, | Ամսեկան, շահագործման ընթացքում | Վիզուալ ուսում-նասիրություն | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| **Օդի որակ՝փոշի** | Օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրա-պարակներում, ներառյալ մոտեցման ճանապարհները, | Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսում-նասիրություն<br><br>Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվող օդի որակի չափիչ սարքի տեղադրում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| **Աղմուկ** | Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրա-պարակներում, ներառյալ շին-ճամբարը, մոտեցման ճանապարհները, | Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսում-նասիրություն | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ |
| | Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով | Ավտոկայանատ-եղեր, մոտեցման ճանապարհներ, | Շաբաթական | Վիզուալ ուսում-նասիրություն | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՍԿ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Երթևեկության անվտանգու-թյուն** | Երթևեկության անվտանգությունն ապահովելու համար | ՇԿ կողմից օգտագործվող բոլոր ընդհանուր ճանապարհները | Ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսումնասիրու-թյուն | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |
| **Կենցաղային աղբի առաջացում** | Կանխել հողի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտումը | Գործունեության տեղամաս | Պարբերաբար, շահագործման ընթացքում | Վիզուալ ուսումնասիրու-թյուն | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՍԿ |
| **Կենսաբազմազ անություն** | 31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն որոշման պահանջների պահպանում | Գործունեության տեղամաս, հարակից տարածքներ | Ամեն շաբաթ, շինարարական աշխատանքների ընթացքում | Վիզուալ ուսումնասիրու-թյուն | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ |
| **Շինհրապա-րակի ռեկուլտիվա-ցիա եւ կանա-չապատում** | Շինարարության հետևանքով հողածածկի որակի և լանդշաֆտի էսթետիկ տեսքի կորստի նվազեցման նպատակով | Բոլոր շինհրապա-րակներում, ներառյալ շին-ճամբարը, մոտեցման ճանապարհները, | Շինարարության ավարտական ժամանակահատվածո ւմ | Վիզուալ ստուգում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ, ԻԳ, Խորհրդատու, |
| **Աշխատողների առողջություն և անվտան-գություն** | Վնասվածքների եւ վթարների հավանականությունը նվազեցնելու նպատակով | Բոլոր շինհրապարակ-ներում | Շինարարական աշխատանքների ամբողջ ընթցքում | Գործունեության զննում, արձանա-գրությունների և հաշվետվություն-ների ստուգում | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ, ԻԳ, Խորհրդատու |
| | | Գործունեության տեղամաս | Շահագործման ամբողջ ընթցքում | Տեխնոլոգիական մատյանների ստուգում | Ներառված է շահագործ-ման գնի մեջ | ՍԿ, ԻԳ, Խորհրդատու |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Պատրաստվա-ծությունը արտակարգ իրավիճակ-ներին** | - Նվազեցնել շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության ռիսկերը | Բոլոր շինհրապա-րակներում | Շինարարության ամբողջ ընթացքում | Պարբերական ստուգումներ | Ներառված է շինարարու-թյան գնի մեջ | ՇԿ, ԻԳ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Հասարակու-թյան իրազեկվածու-թյուն** | Նվազեցնել շինհրապարակին մոտ գտնվող բնակավայրերի վրա ազդեցության | Տեղական համայնքների գրասենյակներ | Նախքան շինարարական աշխատնքները | Ծանուցման փաստաթղթերի ստուգում Հարցազրույցներ շինհրապարակի մոտ գտնվող բնակավայրերի բնակիչների հետ | Ներառված է շահագործման գնի մեջ | ՆԿ, Խորհրդատու |
| **Հանրային առողջություն եւ անվտան-գություն** | Ապահովել բնակիչների համապատասխան նախազգուշացումը | Հիմնական ճանապարհների տեսանելի մասերում, բնակավայրերին մոտ գտնվող տեղամասերի մոտ | Ամսեկան | Նախազգուշական նշանների ստուգում | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ, ԻԳ, Խորհրդատու |
| **Տեղական բնակչության զբաղվածու-թյուն** | - Մշակել և իրականացնել աշխատողների ընդունման և աշխատավարձերի վճարման անխտրական քաղաքականություն<br>- Շինարարական աշխատանքների համար աշխատողներ ընդունելիս առաջնահերթությունը պետք է տրվի տեղի բնակչությանը | - Տեղական համայնքներ | Պարբերաբար, շինարարության ընթացքում | Հարցազրույցներ | Ներառված է շինարարությ ան գնի մեջ | ՇԿ, Խորհրդատու |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Գենդերային ասպեկտներ** | Ապահովել աշխատան-քային վայրում/ աշխատողների ճամբարում սեռական ոտնձգությունների բացարձակ անհանդուր-ժողականություն Ուժեղացնել տարածքային իշխանությունների ներգրավվածությունը գենդերային խնդիրների հարցում (օր.՝ ստանալ բողոքներ կանանց կողմից) | - Բոլոր շինհրպարակները<br>- Տեղական համայնքներ | Ամեն ամիս, շինարարության փուլի ընթացքում Եռամսյակային, շահագործման փուլի ընթացքում | Հարցազրույցներ կանանց հետ<br>-Բողոքների ստուգում | Ներառված է շինարարու-թյան և շահագործ-ման գնի մեջ | ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ |
| **Բողոքների լուծման մեխանիզմ** | Ապահովել բողոքների լուծման մեխանիզմի իրականացումը և դրա արդյունավետությունը | - Տեղական համայնքներ | Ամսական | - Բողոքների ստուգում<br>- Հարցազրույց աշխատողների հետ<br>- Հարցազրույցներ համայնքների ղեկավարների և բնակիչների հետ | Ներառված է շինարարու-թյան և շահագործման գնի մեջ | ՇԿ, ՍԿ, Խորհրդատու, ԻԳ |

# ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 14 դեկտեմբերի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԱԼԽԱՍՅԱՆՑ 12» ՍՊԸ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Արաբկիր Ս. Մալխասյանց փողոց 6/3 հողամաս

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածք 23/07/2020թ., Սեփականաշնորհման պայմանագիր 19.06.1997թ. h 623-3, հանձնման --ընդունման Ակտ 31.05.2004թ, Առուվաճառքի պայմանագիր 06.02.2007թ. h 485, Երևանի քաղաքապետի 06.02.2020թ. N 325-Ա որոշում, Ինքնակամ կառույցի օրինականացման վճարի անդորրագիր 12.02.2020թ. N 7118, Ուղղակի վաճառքի պայմանագիր 05.03.2020թ. թիվ 1 1 1 1 Մ ի ա վ ո ր մ ա ն դ ի մ ո ւ մ , Հ ա մ ա յ ն ք ի ղ ե կ ա վ ա ր ի ո ր ո շ ո ւ մ 0 8 / 0 2 / 2 0 2 1 , Ճարտարապետահատակագծային առաջադրանք 08/02/2021.թ h 01/18-07/217-Ա, Քանդման թույլտվության մասին որոշում եւ թույլտվություն 24/02/2021.թ h 01/18-Մ-2414-8 , Դիմում բաժանման վերաբերյալ 20/10/2022թ.

**ՎԿԱՅԱԿԱՆ N 14122022-01-0136, գաղտնաբառ՝ 85TGCAA1B5D7**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 1/2

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0208-0059
Մակերեսի չափը (հա)՝ 0.038
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
